

ԹՈՒՐՔԻԱ ԴԺԳՈՂՈՒԹԻՒՆ ԿՐ ՅԱՅՏՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Երկուշաբթի, Յունուար 19-ին Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութիւնը քննադատութեան ենթարկած է հայ-թրքական արձանագրութիւններու սահմանադրականութեան վերաբերեալ Հայաստանի Սահմանադրական դատարանի Յունուար 12-ին կայացուցած որոշումը:

Թուրքիոյ արտաքին գերատեսչութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, յիշեալ որոշումը կը պարունակէ նախապայմաններ եւ սահմանափակող դրոյթներ, որոնք «վնաս կը հասցնեն արձանագրութիւններու տարւին եւ ոգիին»:

«Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշումը կը վտանգէ այդ արձանագրութիւններու շուրջ ընթացող բանակցութիւններու բուն իմաստը, ինչպէս նաեւ անոնց հիմնարար նպատակը: Այդ մտտեցումը չի կրնար ընդունելի ըլլալ թրքական կողմի համար», - ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Միւս կողմէ, Թուրքիոյ վարչապետ Ռեշեփ Թալիբ Էրտողան Մէլուտական Արաբիա այցելութեան ընթացքին յայտարարած է, որ եթէ ՀՀ Սահմանադրական դատարանը չփոխէ իր դիրքորոշումը՝ արձանագրութիւններու հետ կապուած, ապա այս գործընթացը կրնայ մտնել փակուղի:

Ըստ Թուրքիոյ վարչապետի, «Հայաստան ամէն կերպ կը փորձէ գրաքննութեան ենթարկել արձանագրութիւններու բովանդակութիւնը, ինչ որ անընդունելի է Անգարայի համար»:

«Ազատութիւն» ռատիոկայանի ինդրանքով մեկնաբանելով Թուրքիոյ այս արձագանգը՝ սահմանադրագէտ Հրայր Թովմասեան ըսած է, - «Երեւի թէ հայկական կողմի ուշացած արձագանգն է, որ Թուրքիան հիմա իրեն իրաւունք է վերապահուած նման բաների մասին յայտարարութիւն անել: Եւ պէտք էր աւելի շուտ քայլեր անել»:

Շաբ.ը էջ 4

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱԻ 7 ՏԱՐՈՒԱՅ ԱԶԱՏԱԶՐԿՍԱՆ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԵՒՈՒ ԵԿԱՏԵՑ ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ

Երեքշաբթի, Յունուար 19-ին դատարար Մնացական Մարտիրոսեանի արձակած վճիռով «Հայկական Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեան մեղաւոր նկատուեցաւ 2008 թուականի նախագահական ընտրութիւններուն յաջորդած իրադարձութիւններու ընթացքին «զանգուածային անկարգութիւններ կազմակերպելու մէջ», դատապարտուելով 7 տարուայ ազատազրկման:

Նիկոլ Փաշինեանի պաշտպան Լուսինէ Սահակեան այս առթիւ ըսաւ. - «Արդար դատավճիռ, իհարկէ, չէինք ակնկալում դատարանից, որովհետեւ վաղուց Հայաստանում արդար դատավճիռներ չեն լինում»: Պաշտպանը համոզմունք յայտնեց, որ դատավճիռը պատիժ էր Նիկոլ Փաշինեանի քաղաքական գործունէութեան համար: «Իշխանութիւնները այս դատավճիռով ապացուցեցին, որ թոյլ են եւ վախենում են Փաշինեանին ազատութեան մէջ տեսնելուց», - ըսաւ Լուսինէ Սահակեան:

Դատավճիռի հրատարակումը դատարանի շէնքի առաջ հաւաքուած բազմութեան մօտ յառաջացուց բուռն վրդովմունք: Անոնք կը վանկարկէին՝ «Ամօթ», «Դուք ամէն ինչի համար պատասխան էք տալու», «Պայքա՛ր, պայքա՛ր մինչեւ վերջ»:

Ընդդիմութիւնը դատարանի կայացուցած վճիռը բնորոշեց որպէս «հաշուեյարդար ընդդիմութեան նկատմամբ»:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ գրոյցի ընթացքին Հայ Ազգային Գոնկրէսի համակարգող Լեւոն Զուրաբեան յայտնեց, որ իշխանութիւնները պատասխան պիտի տան բոլոր ապօրինի որոշումներու համար: «Բաց նաեւ պիտի հասկանան այն մարդիկ՝ դատարանները, քննիչները, դատախազները, որ իրենց էլ ներում չի լինելու, որովհետեւ իրենք, այո, դահիճներ են: Դահիճն էլ կատարում է ընդամէնը հրաման»:

«Մենք գիտենք, որ այս դատավճիռը անձամբ Սերժ Սարգսեանն է ընդունել, բայց նրանք, ովքեր կատարում են նրա հրամանները, դահիճներ են... եւ բոլորը



Նիկոլ Փաշինեան դատավճիռէն ետք կը պարզէ յաղթանակի նշանը

տալու են պատասխան», - եզրափակեց Զուրաբեան:

Գոնկրէսին մաս կազմող Հայաստանի Ժողովրդական կուսակցութեան նախագահ Ստեփան Դեմիրճեան դատավճիռի կապակցութեամբ «Ազատութիւն» ռատիոկայանին ըսաւ. - «Դատարանը յստակ պատասխան կատարեց»:

Աւելի ուշ Նիկոլ Փաշինեան «Երեւան-Կենտրոն» քրէակատարողական հիմնարկէն տարածած յայտարարութեան մէջ պնդեց, որ Մնացական Մարտիրոսեանի կա-

յացուցած դատավճիռը հերթական անգամ կ'ապացուցէ իր դէմ յարուցուած քրէական հետապնդման քաղաքական բնույթը: «Խամաճիկային դատարանը, յանցագործ դատախազութիւնը, ապօրինի իշխանութիւնները, ի սկզբանէ որոշելով ինձ բանտում պահելու մասին, չեն կարողացել համաձայնութեան գալ դա իրականացնելու մեթոտաբանութեան հարցում»:

Փաշինեան Հայաստանի Հան-

Շաբ.ը էջ 4

ՊԱՔՈՒԻ ԶԱՐԴԵՐՈՒ 20-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԵՐՈՒ ՆԱՍԱԿԸ ՈՒՂՂՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒՄ

Ատրպէյճանի հայութեան դեմ կատարուած ջարդերու 20-ամեակի առթիւ, ՄԻՀԿ «Տիրուցի» ուսանողական եւ երիտասարդական միութիւնը բաց նամակով մը դիմած է Եւրոպայի Խորհուրդի, ԵԱՀԿ-ի եւ ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակներուն:

«Լրացաւ Բաքու 1990 թ.-ի հայերի ջարդերի 20-ամեակը: Ուղիղ 20 տարի առաջ աղբրեջանական խուժանը պաշտօնական Բաքուի անմիջական նախաձեռնութեամբ եւ թեյադրանքով յարձակուեց անյիշելի ժամանակներից այդ քաղաքում ապրող խաղաղ բնակչութեան վրայ, սպաննեց եւ թալանեց վերջիններին: Այս ամէնի որակումը միայն մէկն է. Յեղասպանութիւն: Միայն Յեղասպանութիւն տերմինով կարելի է բնութագրել այն վայրագութիւնները, որ կատարեց ազերի խուժանը:

Պարոնայք, մինչեւ այսօր Բաքուի հայ բնակչութեան ցեղասպանութեան իրաւական գնահատական չի տրուել: Իրաւական գնահատականի բացակայութիւնը համարժէք է նոր ցեղասպանութեան իրականացմանը: Բազմաչարչար աղբրեջանահայերի առջեւ դուք բարոյական եւ իրաւական պարտականութիւն ունէք ապացուցելու, որ իսկապէս հանդիսանում էք մարդու իրաւունքներ պաշտպանող եւ ժողովրդավարութիւն քարոզող կառույցների ներկայացուցիչներ:

Յորդորում ենք Ձեզ՝ ճանաչել ուղիղ 20 տարի առաջ տեղի ունեցած սահմուկեցուցիչ իրադարձութիւններն իբրեւ Յեղասպանութիւն, իսկ կազմակերպիչներին, որոնցից շատերը բարձր ամբիոններից ճառում են մարդու իրաւունքների մասին՝ ենթարկել քրէական պատասխանատուութեան՝ իբրեւ խաղաղ բնակչութեան դէմ ոճիրներ գործած անձանց:

Յիշեցնում ենք, Դուք բարոյական խնդիր ունէք ապացուցելու ողջ հայ ժողովրդին, որ Ձեզ համար աւելի թանկ չէ Բաքուի սեւ նաւթը, քան անմեղ ժողովրդի յղուած արիւնը»:

2009-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԾՆԱԾ Է 45 ՀԱԶԱՐ ԵՐԵՒԱՅ

ՀՀ Արդարադատութեան նախարարութեան քաղաքացիական կայքէջի տեղեկութեան ակտերու գրանցման գործակալութեան տուեալներու համաձայն, 2009-ին Հայաստանի մէջ ծնած է 44,999 երեխայ: Արձանագրուած է 18,765 ամուսնութիւն եւ 3,013 ամուսնալուծութիւն: Գրանցուած է 131 որդեգրման դէպք: Մահացողներու թիւը կազմած է 27,268:

2008-ին արձանագրուած է ծննդեան 41,406, ամուսնութեան՝ 18,236 եւ ամուսնալուծութեան 3,192

դէպք: Մահացողներու թիւը եղած է 27,281:

2007-ին արձանագրուած է 40,844 ծնունդ, 18,144 ամուսնութիւն եւ 3,083 ամուսնալուծութիւն: Մահացողներու թիւը եղած է 26,827:

Այսպիսով, վերջին երեք տարիներուն Հայաստանի մէջ ծնունդներու թիւը բարձրացած է, իսկ մահացողներու թիւը մնացած է գրեթէ նոյնը՝ արձանագրելով բնակչութեան աճ:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑ ԵՕԹ ՏԱՐՈՒԱՅ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ

ձիշդ աչնպէս, ինչպէս Յունուարի 10-ին Երեւանի թիւ 10 ընտրատարած քի ընտրութիւններէն արդիւնքներն էին կանխատեսելի, կանխատեսելի էր նաեւ դատարանի երէկուայ որոշումը Նիկոլ Փաշինեանին ազատագրելու վերաբերեալ: Ես կանխատեսել էինք: Բացատրելով, ի դէպ, շարժառիթները, որոնցից բխում էին այդ կանխատեսումները. այն է, ձեռնարկուած բոլոր միջոցառումներով նախ ապահովել Նիկոլի պարտութիւնը ընտրութիւններում, նպատակ ունենալով հասարակութեան հաւատացնել, թէ Փաշինեանը չունի բաւարար հեղինակութիւն, անգամ պոլի փետին յաղթելու, եւ երկրորդ, Մարտի 1-ին կատարուածի պատասխանատուութիւնը բարդել Նիկոլի վրայ:

Կային, իհարկէ, անյոյս լաւատեսներ, որոնք պատրանքներ ունէին, թէ զգուշանալով արտաքին ճնշումներից, իշխանութիւնները Նիկոլին «թոյլ կը տան» ընտրուել պատգամաւոր, թէ Նիկոլին ազատ կ'արձակեն եթէ ոչ նրան արդարացնելով, ապա նրա նկատմամբ համաներում կիրառելով: Կային անգամ յուսահատ իմաստակներ, որոնք թէ՛ ընտրութիւնները, թէ՛ դատարանի որոշումը շտապում էին դիտարկել ու մեկնաբանել իշխանութեան ու ընդդիմութեան միջեւ իբր ձեռք բերուած համաձայնութեան շրջանակներում, Լեւոնի ու Սերժի միջեւ իբրեւ թէ կայացած պայմանաւորուածութեան տիրոջութում:

Ամէն ինչի մէջ տրամաբանութիւն եւ ողջամտութիւն փնտռելը ողջունելի է մինչեւ այն պահը, երբ փնտռուածը աղերսում է ՀՀ իշխանութիւնների գործունէութեան դաշտին: Իշխանութիւն ասուածը էլի քանի՞ անգամ պիտի արհամարհի ԵՆԽՎ «հաւասարակշռուած» բանաձեւերը, որ այս կառույցը գիտակցի, որ ՀՀ իշխանութիւն ասուածը պարզապէս ծաղրում է իրեն, եւ ՀՀ քաղաքացիներն էլ հասկանան, որ աւելի շուտ Հրազդանը հետ կը հոսի, քան ՀՀ իշխանութիւնը կը կատարի ստանձնած պարտաւորութիւնը:

Այնուամենայնիւ, կեցցէ Նիկոլը, որ մինչեւ ուղիւնուածը ճանաչելով այս իշխանութիւնների բնոյթն ու նկարագիրը, որոշեց իր պայքարը շարունակել ճաղերի ետեւում, թերեւս համոզուած, որ ինքը դատարանում չի լսելու արդարացի ման դատավճիռ: Շատ-շատերի,

խոստովանեմ՝ նաեւ այս սողերի հեղինակի դատելու բանը չէ, ճիշտ արեց արդեօք՝ ներկայանալով իրաւապահ կոչուող մարմիններին եւ աւելի շահեկան համարելով կամաւոր ազատագրուածի, քան ազատ վտարանդիի եւ հետապնդողի կարգավիճակը: Շահեկան, ընդ որում, ոչ թէ իր համար, այլ բռնապետութեան դէմ պայքարի արդիւնաւէտութեան տեսանկիւնից: Շատերի, նաեւ՝ այս սողերի հեղինակին կարող է դա թուալ չպատճառաբանուած ինքնագոհողութիւն՝ Նիկոլի բանտում լինելը հազիւ թէ Սերժ Սարգսեանին զրկի քնից ու դադարից, նրա խիղճը հազիւ թէ արթնանայ ու սկսի տանջել իրեն, տանջի այնքան, մինչեւ աղաղակի՝ էլ չեմ ուզում ղեկավարել էս աւագակապետութիւնը, ես գնում եմ, թող գան առաքինի եւ ազնիւ մարդիկ եւ օրէնքի իշխանութիւն հաստատեն երկրում: Նիկոլի՝ բանտում լինելը, այո, թեւ է տալիս պայքարի ջանակիրներին, ոգի է տալիս երիտասարդութեանը, մի քիչ գուցէ կարճացնում է իշխանութեան պնակալեզների լեզուն, մի քիչ գուցէ զսպում է այլանդակութեան եւ այլասերուածութեան համաճարակի տարածումը, բայց ափսոս է մարդը, ափսոս է իմ բազիրը, ափսոս է Նիկոլի երեխաների՝ հայրական ներկայութիւնից զրկուած մանկութիւնը:

Տրուած յանձնարարութեան շրջանակներում դատաւորի կայացրած դատավճռով Նիկոլ Փաշինեանը դատապարտուեց եօթ տարուայ ազատագրկման:

Նոյն այդ դատավճռով Սերժ Սարգսեանը եւ նրա ղեկավարած տիրահաշակ իշխանութիւնը դատապարտուեց յաւելելու եօթ տարուայ ամբարձրութեան:

Դեռ կարող են պատահել անցքեր, կարող են տեղի ունենալ շրջադարձեր, որոնց հետեւանքով, համոզուած ենք, Նիկոլը կը յայտնուի ազատութեան մէջ, եւ նրա դատավճիռը կը գրուի սառույցին: Մինչդեռ, անկախ դրանից, եօթ տարուայ ամբարձրութեան դատավճիռը ոչ մի պարագայում չի բեկանուի: Սերժ Սարգսեանը եւ նրա ղեկավարած իշխանութիւնը իրենց պատիժը կը կրեն յատուկ ռեժիմի գաղութային կայաններում. նման ռեժիմ Հայաստանում դեռ չկայ, բայց այս դատավճռով հաստատուեց:

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ «ՏԱՐԵԳԻՐ»

ԱՄՆ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է ՆՈՐ ՄԱՅՆԴՈՐՖԻՑ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջան այցից առաջ ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ռոբերդ Բրադկէի առանձին հանդիպումները Հայաստանի նախագահի եւ արտգործնախարարի հետ բաւական հետաքրքրական հանգամանք է: Դա յատկապէս հետաքրքրական է այն առումով, որ տեղի է ունենում նաեւ Սերժ Սարգսեանի Մոսկուա կատարելիք այցից առաջ, որ տեղի է ունենալու Յունուարի 18-ին: Պաշտօնապէս յայտարարուել է, որ Մոսկուայում Սերժ Սարգսեանը Դմիտրի Մեդվեդեւի հետ կը քննարկի Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացը, եւ մասնաւորապէս դրա շրջանակում Յունուարի վերջին Ռուսաստանի «հովանու» ներքոյ կայանալիք Սարգսեան-Մեդվեդեւ Ալիեւի եռակողմ հանդիպման հնարաւորութիւնը:

Ահա այդ պարագայում Հայաստան է այցելում ամերիկացի համանախագահ Բրադկէն եւ հանդիպում է Սերժ Սարգսեանի հետ, ով պատրաստուած էր մեկնել Մոսկուա եւ քննարկել Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորումն ու եռակողմ հանդիպման հաւանականութիւնը: Կասկած չկայ, որ Բրադկէի միջոցով պաշտօնական վաշինգտոնը շտապել է Սերժ Սարգսեանին փոխանցել Մոսկուայում սպասուելիք քննարկումների վերաբերեալ իր նկատաւորումները: Դատելով Ուաշինգտոնի այդ քայլից, կարելի է եզրակացնել, որ Մոսկուայի հանդիպումը բաւական լուրջ է ընկալուած ովկիանոսի այն կողմում: Չի բացառուում նաեւ, որ վաշինգտոնը երեւանին, Մոսկուա կատարելիք այցից առաջ, պարզապէս խորհուրդ է տուել այդ այցը լուրջ շնորհակցել:

Բանն այն է, որ կայ Ռուսաստանի նախաձեռնութեամբ եռակողմ հանդիպման նախադէպ, որը «մայնորթեան հռչակագիր» ծնեց: Թէ յատկապէս ինչ գործնական ազդեցութիւն ունի այդ հռչակագիրը կարգաւորման գործընթացի վրայ, դժուար է ասել, քանի որ դրանից յետոյ տեղի չի ունեցել որեւէ նշանակալի իրադարձութիւն, որը կը վկայէր Մայնորթի գործնականութեան մասին: Այդպիսին կարող են համարուել հայ-թուրքական համատեղ յայտարարութիւնն Ապրիլի 22-ի լոյս 23-ի դիշերը, ինչպէս նաեւ հայ-թուրքական արձանագրութիւնների նախատորագրումն ու ստորագրումը: Դա այն դէպքում, երբ համարենք, որ Ղարաբաղի եւ հայ-թուրքական շարաբերութեան խնդիրները շղկակապուած են իրար ոչ միայն թուրքիայի, այլ նաեւ միջազգային միջնորդների համար: Բայց միջնորդները մերժում են այդ շղկակապուածութիւնը: Միեւնոյն ժամանակ, նրանք դա կարող են անել ընդամենը դիւանագիտական նկատաւորումներից ելնելով, իսկ իրականում լաւ էլ շղկակապել եւ առաջ տանել «զուգահեռ», առաւել եւս, որ ի տարբերութիւն շղկակապուածութեան, գուզահեռութիւնը նրանք չեն թաքցնում:

Այդ դէպքում հաւանական է դառնում, որ Մոսկուայում հունցուած է Մայնորթի շարունակութեան պէս մի բան, որին փորձում են տալ աւելի գործնականութիւն:

Այսինքն, եղաւ Մայնորթի, յետոյ քայլեր հայ-թուրքական ուղղութեամբ, հիմա նորից «մայնորթի» ուղղութեամբ է փորձ արուած, որպէսզի դրանից յետոյ կրկին բեկում տեղի ունենայ հայ-թուրքական ուղղութեամբ: Այդ ամէնի մէջ հետաքրքրականն այն է, թէ շղթային ինչպէս է վերաբերուած Միացեալ Նահանգները, ով փաստորէն Ռուսաստանին կամայ, թէ աւանայ տուել է այդ փորձի հնարաւորութիւնը, նախորդ տարուայ Դեկտեմբերին Ուաշինգտոնում ուղղակի մեղմ ասած «ճանապարհ» դնելով բաւական մեծ հաւանութիւններով Նահանգներ ժամանած էրդոզանին, ում ընդամենը հնարաւորութիւն տուեցին չլուել հայ-թուրքական յարաբերութեան եւ Ղարաբաղի հարցի շղկակապուածութեան մասին:

Դրանից յետոյ Նահանգների համեմատական «պասիւլութիւնը» եւ Մոսկուայից առաջ Ռոբերդ Բրադկէի երեւան ժամանումը թերեւս վկայում են, որ Մոսկուայում տեղի ունենալիքի կապակցութեամբ ԱՄՆ առնուազն ունի «վերապահումներ», ինչն էլ թերեւս փոխանցել է Հայաստանի իշխանութեանը Բրադկէն: Աւելին, չի բացառուում, որ խօսքը ոչ միայն վերապահումների, այլ առարկութիւնների մասին է: Հակառակ դէպքում, հազիւ թէ կարիք լինէր Սերժ Սարգսեանին հանդիպել նրա Մոսկուա մեկնելուց անմիջապէս առաջ:

ՅԱԿՈՒԲ ԲԱԴԱԼԵԱՆ «ԼՐԱԳԻՐ»


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Մրջանի ԽՍԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ ԿԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ Գեո. (626) 797-7680 Ֆաքս. (626)797- 6863 E:Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ Yes, I wish to subscribe to Massis Weekly Enclosed a check for (one year) * \$50,00 for USA * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada. * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas. Name: ----- Address: ----- City: ----- State:----- Zip Code:----- Country: ----- Tel :----- Fax : -----

ՀԱՅԱՍՏԱՆ

«ՄԻՋԱՆՑՔԱՅԻՆ ԼՈՒԾՄԱՍԲ ԿՐ ԿՈՐՑՆԵՆՔ ՅԱՅԱՍՏԱՆԸ»

«Ա1»: ՄԴՀԿ կենտրոնական վարչութեան անդամ Վահան Շիրխանեանին մտահոգում է հայթուրքական եւ Արցախեան խնդրի «միջանցքային լուծմանը» սպասարկող արտաքին ճնշումները: «Միջանցքային» բառը պարոն Շիրխանեանը պատահական չի ընտրել, նա գտնում է, որ այսօր առաջարկուող լուծումը ենթադրում է մի միջանցքի առկայություն՝ ՀՀ-ի եւ Արցախի միջև:



ՄԴՀԿ կենտրոնական վարչութեան անդամ Վահան Շիրխանեան

«Դա նշանակում է Ղարաբաղը Ադրբեջանին յանձնել, եւ ջնջել Հայաստանի ապագան, քանզի Արցախի գոյությունը Հայաստանի գոյատեւման երաշխիքն է», -ասաց ՄԱԱ հիւր Վահան Շիրխանեանը:

Նա արտաքին մարտահրաւէր է համարում նաեւ հայթուրքական յարաբերությունների ֆոնի վրայ ուսուցողական մերձեցումը: Այստեղ էլ նա մեղադրում է ՀՀ իշխանություններին՝ սխալ քաղաքականություն վարելու համար, եւ ընդգծում, որ ՌԴ-ի համար թուրքիայի հետ յարաբերությունները ռազմավարական նշանակություն ունեն:

Այդուհանդերձ, Շիրխանեանը բաւականին բարձր գնահատեց Պուտինի, Մեդվեդեւի եւ Լաւրովի՝ Արցախեան հիմնահարցի ու հայթուրքական յարաբերությունների տարանջատման վերաբերեալ յայտարարությունները:

Արտաքին մարտահրաւէրների թւում Վահան Շիրխանեանը ընդգծեց սփիւռքի հիասթափութունները հայրենիքից՝ պայմանաւորուած հայթուրքական յարաբերությունների կարգաւորմամբ:

Նա նաեւ նկատեց, որ իշխանական որեւէ կառույց ոչ մի պատշաճ գնահատական, վերլուծություն չներկայացրեց հայթուրքական յարաբերությունների կարգաւորման սոցիալական, տնտեսական, քաղաքական անհրաժեշտութեան մասին: Թուրքիայի հետ յարաբերությունների կարգաւորումը ՄԴՀԿ-ն հնարաւոր է համարում միայն թուրքիայի կողմից հայոց ցեղասպանությունեան ճանաչումից յետոյ, կուսակցությունը չի մտնում

արձանագրությունների բովանդակային քննարկման մէջ: Իսկ հարցին, թէ հնարաւոր համարում է ՄԴՀԿ-ՀՅԴ համագործակցություն այդ խնդրի շուրջ, Շիրխանեանը պատասխանեց, որ ՀՅԴ-ն արդէն անցել է բովանդակային քննարկման, ինչն իրենց համար անթույլատրելի է:

Ներքին մարտահրաւէրների թւում ՀՀ նախկին փոխվարչապետը ամենավտանգաւորներից է համարում ստուերային տնտեսութեան գոյությունը, որը ըստ անկախ փորձագէտների, 80-85 տոկոս է կազմում, իսկ ըստ պաշտօնական տուեաների՝ մօտ 40 տոկոս: Այսպիսի ստուեր ունենալու պարագայում անհնար է ակնկալել երկրի տնտեսութեան զարգացումը. «Այս պայմաններում չի կարող չաղթահարուել ոչ աղքատութիւնը, արտագաղթը, գործազրկութիւնը»: Ներքին միւս մարտահրաւէրն, ըստ Շիրխանեանի, օրէնքի ընտրովի կիրառումն է: Քանի դեռ օրէնքի գերակայություն չկայ, երկիրը չի կարող զարգանալ: Հիմնական յաջորդ մարտահրաւէրը կառավարման համակարգի անկատարությունն է, լուծումն, ըստ Շիրխանեանի, համակարգային փոփոխությունը: Եւ հասարակությունում տարածուած ամենավտանգաւոր երեւոյթներից համարեց հոգեւոր արժէքները նիւթականով փոխելու իրողությունը: «Սա է ամենածանր կորուստներից մէկը», -ասաց Շիրխանեանը:

ՀՐԱՆԴ ԲԱԳՐԱՏԵԱՆ.

«ԱՅՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՕՐՕՔ ՈՉ ՄԻ ԳԳՆԱԺԱՍ ԵՒ ՉԻ ՅԱՂԹԱՅԱՐՈՒԻ»

«Հայաստանը կարիք ունի նոր, մասշտաբային, արմատական բարեփոխումների: Այս կառավարման ախպը չի բերում որեւէ արդիւնքի», - լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է ՀՀ նախկին վարչապետ, ՀԱԿ ներկայացուցիչ Հրանդ Բագրատեանը: Որպէս օրինակ Հ. Բագրատեանը մատնանշել է, թէ հարկաւոր է «պրոգրեսիւ» եկամտահարկ, սակայն, ըստ նրա, իշխանութիւնները դա չեն ընդունի:



ՀՀ նախկին վարչապետ Հրանդ Բագրատեան

Նախկին վարչապետը կարծիք է յայտնել, թէ պէտք է խրախուսել կառուցապատողներին.

«Ինչո՞ւ է ճգնաժամն այդքան խոր, քան աշխարհի միւս երկրներում. կառուցապատողների պատճառով: Իրենց անձնական շահի համար մարդիկ շուրջ տասը տարի էլիտար բնակարան են կառուցում, որը չի վաճառուում, վաղն էլ չի վաճառուելու»:

«Այս կառավարություն օրօք ոչ մի ճգնաժամ էլ չի չաղթահարուի», - ասել է նախկին վարչապետը: Հայաստանին հարկաւոր է լուրջ բուժօգնություն ինչպէս քաղաքականութեան, այնպէս էլ տնտեսութեան ոլորտում: «Նոյնիսկ չլինելով տնտեսագէտ՝ կարելի է հասկանալ, որ վիճակն աղետալի է», - նշել է նա:

Այս առումով նա անդրադարձել է վարկերին, որոնք Հայաստանը վերցրել է միջազգային կազմակերպություններից եւ Ռուսաստանից ճգնաժամի դէմ պայքարելու համար:

«Եթէ գումարները չեն վերադարձնում, չորս տարի յետոյ պէտք է դնաս քաղաքական զիջումների»:

ԱՐԾՈՒԻԿ ՄԻՆԱՍԵԱՆԸ ՅԱԿԱԴԱՐՁՈՒՄ Ե ՓՈՍՏԱՆՋԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐԻՆ

Ազգային ժողովի պատգամաւոր (ՀՅԴ) Արծուիկ Մինասեանը հակադրածեց «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանի յայտարարությունը, թէ Դաշնակցութիւնն իրական ընդդիմութիւն չէ, եւ ԵՆԽՎ-ում այդ կուսակցութեան դրսեւորած վարքագիծը չի տարբերում իշխանութեան ներկայացուցիչների վարքագծից, նշելով, թէ ցաւում է Փոստանջեանի այդօրինակ արձանագրումների համար:

Ազգային ժողովում վերջերս հրաւիրած խորհրդակցութիւններից մէկի ժամանակ քննարկուել է «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Զարուհի Փոստանջեանին ԵՆԽՎ-ում Հայաստանի պատուիրակութեան մշտական անդամի կարգավիճակից զրկելու հարցը:

Բանն այն է, որ ՀՅԴ-ի՝ ընդդիմութեան վերածուելուց յետոյ Հայաստանի պատուիրակութեան հիմնական կազմում ներկայացուած

են երկու ընդդիմադիրներ՝ Զարուհի Փոստանջեանը («Ժառանգութիւն») եւ Արմէն Ռուստամեանը (ՀՅԴ): Մինչդեռ այդ թիւը չի համապատասխանում խորհրդարանական ուժերի ներկայիս համամասնութեանը: Ու քանի որ Դաշնակցութիւնն աւելի մեծ թիւով պատգամաւորներ ունի խորհրդարանում, հետեւաբար, մշտական անդամի կարգավիճակից առաջիկայում կը զրկուի Զարուհի Փոստանջեանը:

Փոստանջեանը համարում է, որ նախքան պնդումներին, թէ այս հարցը բարձրացուել է «Օրինաց երկիր» կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան կողմից, նախաձեռնութեան հեղինակը Ազգային ժողովի նախագահ Հովիթ Աբրահամեանն է, ով ցանկանում է սահմանափակել ընդդիմադիր պատգամաւորի գործունէությունը Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում:

ՊԱՏՐԱՍ ԵՆ ԱՆՑՆԵԼ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՅՄԱՆԸ, ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

«Ա1»: Դեկտեմբեր 18-ին Շիրակի մարզի մօտ 800 անհատ տաքսու վարորդներ բողոքի ակցիա էին կազմակերպել Գիւմրում: Պատճառն իրենց նկատմամբ կիրառուող սուղանքներն են (ընդ որում, տաքսու վարորդների խօսքերով, իրենց սուղանել են դեռեւս 2009-ին, երբ օրէնքի կիրառումը կասեցուած էր):



Շիրակի մարզի անհատ տաքսի վարորդները կը բողոքեն

Տաքսու վարորդների պահանջն էր մեղմացնել անհատական տաքսիները հարկման մասին ընդունուած օրէնքը:

«Մենք ի՞նչ ենք աշխատում, որ հա՞մ իրենց տանք, հա՞մ աւտոյին նայենք ու տուն պահենք: Թող այս հարցին մի քիչ լոգիկայով մօտենան: Մենք պատրաստ ենք աշխատելու մեր տունը պահելու համար: Հակառակ դէպքում թող գործարաններ, հիմնարկներ ստեղծեն, որ այսքան մարդ գնայ, գլուխները կախ աշխատի: Թող իրենք այդ մասին մտածեն, ոչ թէ մեր հետեւից ընկնեն», - ասել է բողոքեաւոր տաքսիստներից Յարութիւն Կիրակոսեանը:

Մայրաքաղաք տրամադրուած վարորդները կառավարութեան քայլերը նոյնացնում էին Յեղասպանութեան հետ. «Թուրքիայից պահանջում են Յեղասպանութիւնը ճանաչել, բայց սեղում ցեղասպանութիւն են անում: Չաշխատեմ, իրենց տուած 25 000 դրամ թոշակով ի՞նչ անեմ, զազի, լոյսի վճարները տամ, թէ՛ ընտանիք պահեմ», - դժգոհել է թոշակառու վարորդ Գէորգ Պողոսեանը:

Լարարի, իրենք դիմելու են այլ երկրների դեսպանատներ՝ արտասահմանում աշխատանք գտնելու յոյսով: Առաւել ծայրայեղ տրամադրուածները վստահեցնում էին, որ իրենք նոյնիսկ պատրաստ են անցնել թուրքական սահմանը, աշխատանք գտնելու ակնկալիքով:

Վարորդների բողոքի ակցիային բաւական զուսպ պահուածքով հետեւում էին նաեւ ոստիկանները, եւ ակցիայի ամբողջ ընթացքում որեւէ միջադէպ չի գրանցուել:

ԼՈՒՐԵՐ

HUMAN RIGHTS WATCH ԿՐԿԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է ՅԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

«Հայաստանի իշխանութիւնները դեռեւս պատշաճ կերպով չեն հետաքննել 2008-ի մարտեան իրադարձութիւնների ժամանակ ընդդիմութեան անկախ կազմակերպչների հետ բախուձմանը անվտանգութեան ուժերի կողմից ոչ համարժէք ուժի գործադրումը», - յայտարարում է Human Rights Watch (Մարդկային իրաւանց Հսկիչ) իրաւապաշտպան կազմակերպութիւնը, Չորեքշաբթի, Յունուար 20-ին հրատարակուած գեկոյցում:

«Չնայած նախագահ Սերժ Սարգսեանի կողմից յայտարարուած համաներմանը, ընդդիմութեան շուրջ 17 ներկայացուցիչ, տեղական իրաւապաշտպան կազմակերպութիւնների հաղորդմամբ, այսօր էլ շարունակում է ազատագրկուած մնալ», - փաստում է Human Rights Watch-ը:

Չեկոյցը, մասնաւորապէս վկայակոչելով «բազմաթիւ ընդդիմադիրների պնդումները», նշում է, որ անցած տարուայ ընթացքում շարունակուել են մարդու իրաւունքների ոտնահարումները կալանավայրերում: Օրակարգում է մնում նաեւ 2007-ին ոստիկանութեան շէնքում գոհուած Լեւոն Գուլեանի գործը:

Խօսքի ազատութեան ոլորտում կազմակերպութիւնը առանձնացրել է 2009-ին լրագրողների նկատմամբ իրականացուած

բռնութիւնները, շեշտելով, որ չնայած միջազգային կառույցների յորդորներին, Հայաստանի իշխանութիւնները սպառնիչ քննութեան չեն ենթարկել լրագրողների դէմ իրականացուած յարձակումներ դէպքերը:

«Արդէն շուրջ եօթ տարի է, հեռարձակման արտօնագիր չի ստանում նաեւ «Ա1+» հեռուստաընկերութիւնը, չնայած դեռեւս 2008 թուականի Յունիսին Եւրոպական դատարանը որոշում էր կայացրել անկախ հեռուստաընկերութեան օգտին», - փաստում է Human Rights Watch-ը:

Հեղինակաւոր կազմակերպութիւնը նշել է, որ անցած տարուայ ընթացքում Հայաստանի իշխանութիւնները շարունակել են սահմանափակել նաեւ քաղաքացիների, ազատ հաւաքներ անցկացնելու իրաւունքը:

«Ընդդիմութեան հանրահաւաք անցկացնելու 84 դիմումներից հաւանութեան է արժանացել ընդամենը 28-ը: Ընդդիմադիր կուսակցութիւններն ու հասարակական կազմակերպութիւններից մի քանիսը խոչընդոտների են հանդիպել նաեւ փակ տարածքներում միջոցառումներ կազմակերպելիս, իսկ ընդդիմութեան ցույցերի մասին իրագեկող երիտասարդները յարձակման են ենթարկուել իրաւապահների կողմից», - փաստում է Human Rights Watch-ը:

ՌՈՐԵՐԴ ԲՐԱԴԿԵՆ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՑ ԵՐ ԺԱՄԱՆԵԼ՝ ՂԱՐԱԲԱԴԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՒ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ԼՍԵԼՈՒ ՅԱՄԱՐ

ԵԱՀԿ-ի Միսնկի խմբի ամերիկացի համանախագահ Ռոբերդ Բրադկէն Յունուար 17-ին Ստեփանակերտում Լեւոնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեանի հետ հանդիպումից յետոյ յայտարարեց, որ իր տարածաշրջանային այցի նպատակն է նախապատրաստել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ այս շաբաթ կայանալիք հանդիպումը:



ԵԱՀԿ-ի Միսնկի խմբի ամերիկացի համանախագահ Ռոբերդ Բրադկէն

Բակո Սահակեանի հետ մօտ մէկուկէս ժամ տեւած հանդիպումից յետոյ, լրագրողների հետ հանդիպմանը Ռոբերդ Բրադկէն, խօսելով ԱՄՆ-ի դիրքորոշման մասին, ընդգծեց, որ Միացեալ Նահանգները հաստատակամ են դարբարդեան հակամարտութեան կարգաւորման հարցում աւաջընթացի հասնելու ձգտման մէջ:

ԵԱՀԿ-ի ամերիկացի համանախագահը նշեց, որ տարածաշրջան է եկել՝ նպատակ ունենալով նախապատրաստել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ այս շաբաթ կայանալիք հանդիպումը:

«Ինչ վերաբերում է իմ անձնական նախապատրաստմանն այս հանդիպմանը, ես համարեցի, որ շատ կարեւոր կը լինի իմ այստեղ գալը՝ լսելու համար Ղարաբաղի ղեկավարների եւ բնակչութեան կարծիքները», - ասաց Ռոբերդ Բրադկէն:

Լեւոնային Ղարաբաղի վարչապետը վերջերս յայտարարել էին, որ ծանօթ չեն ոչ մարդիկեան սկզբունքներին եւ ոչ էլ դրա նորացուած տարբերակին հետ:

«Ազատութիւն» ռադիոկայանի այն հարցին, թէ իսկապէ՞ս դարբարդեան հակամարտութեան կարգաւորման հիմքում ընկած սկզբունքները չեն ներկայացուել Լեւոնային Ղարաբաղի ղեկավարութեանը, Ռոբերդ Բրադկէն պատասխանեց. - «Միսնկի խումբն անմիջականօրէն աշխատում է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հետ: Մենք պարբերաբար գալիս ենք Ղարաբաղ, ինչպէս ես եմ այսօր եկել՝ Լեւոնային Ղարաբաղի ղեկավարներին տեղեկացնելու գործընթացների մասին: Մենք կարծում ենք, որ ինչպէս Ղարաբաղի ղեկավարութեանը, այնպէս էլ բնակչութեանը անհրաժեշտ է տեղեկացնել ընթացող բանակցութիւնների մասին: Այնպէս որ, բանակցութիւնների կարգավիճակի եւ քննարկումների թեմայի մասին իրականում տեղեկութիւններ տրամադրուած են»:

«ՀՐԱՆԴ ԴԻՆՔԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՆԱԽԱՉԵՈՒՆՈՒԹԵԱՄԲ ՍՊԱՆՆԵՑԻՆ»

Յունուարի 16-ին Ստամբուլի կենտրոնական փողոցներից մէկում հաւաքուել էին մօտ 300 մտաւորականներ, որոնք մարդկանց թուլցիկներ էին բաժանում՝ պոլսահայ հրապարակախօս, Ակօս թերթի խմբագիր Հրանդ Դինքի սպանութեան վայրում հաւաքուելու մասին: Թուրքական Bianet կայքէջի փոխանցմամբ, հաւաքուածները թաքսիմ հրապարակից սկսել են իրեն երթը մինչեւ Գալաթասարայի վարժարանի մօտ՝ իրենց ձեռքներին պահելով պատառներ. «Կեցցէ ժողովուրդների եղբայրութիւնը», «Ի հեճուկա ֆաշիզմի, իմ եղբայրն ես Հրանդ», «Մարդասպանին գիտենք, պահանջում ենք արդարադատութիւն» լօզունքներով:



Հրանդ Դինք

Այնուհետ Գալաթասարայի վարժարանի դիմաց համատեղ յայտարարութեամբ է հանդէս եկել արուեստագէտ Մահիր Գիւնշիրայը:

«Հրանդ Դինքի զգրելի սպանութիւնից երեք տարի է անցել, սակայն նրա սպանութեան պատուիրատուները դեռ հանգիստ չըջում են: Որպէս գործիք օգտագործուած ընդամենը 4-5 հոգու են դատարանի առջեւ կանգնեցրել: Իրենց յայտարարութիւններով այս սպանութեան համար հող նախապատրաստողները հանգիստ չարունակում են պաշտօնավարել: Մարդասպաններին աճեցնողները, նրանց պաշտօն տուողները, մարդասպանին դրօշ մօտ կանգնեցրած եւ հերոսացրածները դեռեւս պետական պաշտօններ են զբաղեց-

նում: «Հրանդին մի հաւաքական պաշտօնական նախաձեռնութեամբ սպանեցին: Այդ նախաձեռնութեան հեղինակները վախկոտ, զարշելի եւ զագրելի են: Նրանք չեն կարող հասարակութեան մէջ դուրս գալ: Նրանք չեն կարող իրենց ցոյց տալ: «Արդարադատութեան նկատմամբ մեր յոյսը չի կորել եւ չի կորելու»:

Հրանդը արժանի եղբայրութեան մի իտէալ թողեց: Արժանի եւ վստահելի եղբայրութեան համար, Հրանդի համար, արդարութեան համար, Յունուարի 19-ին հաւաքուենք այն վայրում, որտեղ դաժանաբար սպանուեց Հրանդ Դինքը», - յայտարարեց թուրք արուեստագէտը:

ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ ՅԱՅՏՆ ԸՆԴԴԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ՄԵՐԺՈՒԵԼ Է

Թուրքիայի Սինջանի ծանր յանցագործութիւնների գծով դատարանը մերժել է թուրք մի խումբ ազգայնականների կողմից ներկայացրած հայցը՝ ընդդէմ «Ներեցէք մեզ, հայեր» ակցիայի կազմակերպիչների: Թուրքական Radikal-ի փոխանցմամբ, դատարանը որոշել է, որ տուեալ ակցիան իրականացուել է մտքի ազատութեան շրջանակներում եւ ակցիան կազմակերպողները չեն կարող դատապարտուել:

աւել մարդ: Թուրք մտաւորականների յայտարարութեան մէջ ասուում է. «Ես չեմ կարող գիտակցաբար անտարբերութիւն ցուցաբերել եւ ժխտել այն մեծ աղէտը, որը հայերը վերապրել են 1915 թուականին՝ Օսմանեան կայսրութիւնում: Ես հերքում եմ այդ անարդարութիւնը եւ գործելով իմ անունից, կիսում եմ իմ հայ եղբայրների եւ քոյրերի ցաւը, նրանցից ներողամտութիւն հայցելով»:

NEWS.am-ը յիշեցնում է, որ 2008-ի վերջում մի խումբ թուրք մտաւորականներ սկսեցին «Ներեցէք մեզ, հայեր» ակցիան եւ ինտերնետով այդ յայտարարութեանը միացաւ 30 հազարից մի փոքր

Այն ժամանակ թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիւլը յայտարարեց, որ մտաւորականները կարող են ազատ արտայայտել իրենց մտքերը, իսկ վարչապետ էրդողանը նշեց, որ թուրքիան մեղք չի գործել, որ ներողութիւն խնդրի:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱՒ

Շարունակուած էջ 1-էն
րապետութեան ազատասէր քաղաքացիներուն կոչ ըրաւ հետեւողականօրէն շարունակել պայքարը՝ Հայաստանի Հանրապետութիւնը բռնազաւթած ապօրինի քրէսօլիզարիտիկ իշխանութիւններու հե-

ուացման եւ Հայաստանի մէջ օրինական իշխանութեան հաստատման համար: «Մեր Շարժումը անկասելի է, մեր յղթանակը անխուսափելի է. պայքար, պայքար մինչեւ վերջ», - յայտարարեց քաղաքական բանտարկեալ Նիկոլ Փաշինեան:

ԹՈՒՐՔԻԱ ԴԺԳՈՂՈՒԹԻՒՆ ԿՐ ՅԱՅՏՆԵ

Շարունակուած էջ 1-էն
սկսած այն պահից, երբ արձանագրութիւնները ստորագրելուց յետոյ թուրքիան սկսեց տարբեր ստեաններում բարձրաձայնել, որ սահմանը կը բացուի կամ յարգութիւնները կը զարգանան Ղարաբաղեան կոնֆլիկտի լուծումից յետոյ»:

Սահմանադրագէտը յայտնած է այն համոզումները, որ նման պահուածքով թուրքիա իսկութեան մէջ ինքն է որ կը խոչընդոտէ Արձանագրութիւններու վաւերացման ու կարգաւորման հետագայ ընթացքին: «Սա արդէն քաղաքական պրոցէս է՝ այստեղ իրաւական պրոցէսներ չկան», - ըսած է Հրայր Թովմասեան:

ԼՈՒՐԵՐ

ՄԱԿ-Ը ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆԸ ԿՈՉ Կ'ԸՆԷ ԿԵՍ ՄԻԼԻԱՐԴ ՏՈԼԱՐ ՀԱՆԳԱՆԱԿԵԼ ՀԱՅԻԹԻ ԳՐԱՄԱՐ



Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը միջազգային հանրութեանը կողմէ ըրած է կէս միլիարդ տոլար հանգանակել Հայիթիի երկրաշարժէն տուժածներուն օգնութիւն ցուցաբերելու նպատակով: Ըստ ՄԱԿ-ի՝ Հայիթիի մէջ մօտաւորապէս 3 միլիոն մարդ մի քանի ամիս շարունակ օգնութեան կարիք պիտի ունենայ:

Միւս կողմէ Ֆրանսայի համագործակցութեան նախարար Ալէն Ժոյանտ մաղթեց, որ Միացեալ Նահանգներ իսկական օժանդակութեան ձեռք մեկնէ Հայիթիի աղէտեալներուն եւ հրաժարի երկիրը բռնազրաւելու հնարքներէն: Նախարարը հարց տուաւ, թէ ինչո՞ւ աւելի քան տասը հազար ամերիկացի բանակայիններ ժամանած են Հայիթի, եւ ի՞նչ է անոնց առաքելութիւնը: Ժոյանտ նշեց, որ աշխարհը խրած է Հայիթիին մարդասիրական օժանդակութիւն առաքելու աշխատանքներուն մէջ, իսկ Միացեալ Նահանգներ միայն բանակի միաւորներ կը տեղակայէ աղէտահար կղզիին մէջ:

ԱԶՆԱԴՈՒՐԸ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ՏԱՍՆԵԱԿ ԵՐԳԻՉՆԵՐ «ԺԵՍ ԹԱՆԿԱԳԻՆ ՀԱՅԻԹԻ ԳՐԱՄԱՐ» ՏԵՍԱՅՈՒՆԱԿԱՍ ՄԸ ԿԸ ԶԱՅՆԱԳՐԵՆ

Ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնաւուրը եւ ֆրանսացի տասնեակ երգիչներ երաժշտական տեսահոլովակ մը կը ձայնագրեն Հայիթիի երկրաշարժէն տուժածներու համար հանգանակութիւնը խթանելու նպատակով: «Ժեստ թանկագին Հայիթիի համար է» կոչուող տեսահոլովակը պիտի ցուցադրուի ֆրանսական հեռուստաալիքներով: Նախաձեռնութիւն կայ նաեւ հեռուստամարաթոն կազմակերպել ֆրանսացի յայտնի երգիչներու մասնակցութեամբ:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՒՐԱՑՈՂ ԹՈՒՐՔ ԼՐԱԳՐՈՂ ՄԸ ԿԸ ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒԻ

«Հիւրերիցէթ» օրաթերթը կը հարողէ, որ Հոլանտայի լրատուական կայքէջերէն մէկուն թուրք լրագրողը հեռացուած է աշխատանքէն, Հայկական Յեղափոխութիւնը ուրանալուն եւ ատկէ ետք ներում չհայցելուն համար:

Հոլանտական համացանցային լրատուական գործակալութեան թուրք լրագրող Արմանտ Սաղը յօդուած գրած է՝ «Թուրքերը հայերուն ցեղասպանութեան չեն ենթարկած» խորագիրով: Թուրք լրագրողը կը նշէ, որ այդ հրապարակումէն ետք իր խմբագիրին բազմաթիւ հայեր հեռաձայնած են, որմէ ետք խմբագիրը իրմէ պահանջած է հայերէն ներում հայցել:

Թուրք լրագրողը մերժած է այդ մէկը կատարել, եւ խմբագիրը զինք հեռացուցած է աշխատանքէն: Հեռացուած թուրք լրագրողը կը նշէ, որ ինք զիտէր, թէ հայկական Սփիւռքը ուժեղ է, սակայն ցաւօք սրտի թրքական համայնքը բաւարար աջակցութիւն ցոյց չտուաւ ինծի եւ «ես միանակ մնացի», տիրութեամբ ըսած է աշխատանքէն վտարուած թուրք լրագրողը:

ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆ 5 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՄԷՋ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԻԼ ՄԱՅԱՊԱՏԺԻ

Թեհրանի մէջ սկսած է դատավարութիւնը Դեկտեմբերեան հակակառավարական ցոյցերու 5 մասնակիցներու նկատմամբ, որոնք, ըստ երկրի օրէնքներուն, կարող են դատապարտուիլ մահապատժի: Անցած Դեկտեմբերին իրանի մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած հակակառավարական ցոյցերու մասնակիցներու ու իրաւապահներու բախումներու հետեւանքով զոհուած էր առնուազն 8 մարդ: Դատավարութիւնը առաջինն է Դեկտեմբերին ձերբակալուած հարիւրաւոր ընդդիմադիրներէն առաջին 5-ի նկատմամբ:

ՈՒՔՐԱԻՆԱՅԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻՆ ԿԸ ՊԱՅՔԱՐԻՆ ԿԻԿՏՈՐ ԵԱՆՈՒԿՈՎԻՉԸ ԵՒ ՅՈՒԼԻԱ ՏԻՍՈՇԵՆԿՈՆ



Կիրակի օրը Ուքրաինայի մէջ տեղի ունեցած նախագահական ընտրութիւններուն նախնական տուեալներով առաւել ձայներ ստացած երկու թեկնածուները ընդդիմութեան առաջնորդ Վիկտոր Յանուկովիչը եւ վարչապետ Յուլիա Տիմոշենկոն նախագահի պաշտօնի համար կը պայքարին ընտրութիւններու երկրորդ փուլը, որ տեղի կ'ունենայ Փետրուարի 7-ին:

Ուքրաինայի կեդրոնական ընտրական յանձնաժողովը հրապարակած է ձայներու 77 տոկոսի հաշուարկի նախնական արդիւնքները, որոնց համաձայն, թեկնածուներէն ոչ մէկուն չէ յաջողուած ստանալ քուէներու աւելի քան 50 տոկոսը եւ յաղթանակ տանիլ առաջին փուլին: Ըստ այդմ, Ռեզիմների կուսակցութեան ղեկավար, ռուսամէտ Յանուկովիչը ստացած է քուէներու շուրջ 35.8 տոկոսը: Երկրորդ տեղը ընթացող արեւմտամէտ վարչապետ Տիմոշենկոյի օգտին ձայն տուած է ընտրողներու 24.6 տոկոսը:

Ուքրաինայի գործող նախագահ Վիկտոր Յուլչենկոն, որ իշխանութեան եկաւ 2004 թուականին Ուքրաինայի իրականացուած Նարնջագոյն յեղափոխութեան արդիւնքին, ստացած է քուէներու մօտ 5 տոկոսը:

ՀՈՍԻ ՊԱՊԻ ԴԵՍ ՄԱՅԱՓՈՐՁ ԿԱՏԱՐԱԾ ՄԵՐՍԵՏ ԱԼԻ ԱՔՋԱՆ ԱԶԱՏ Կ'ԱՐՁԱԿՈՒԻ ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆՏԵՆ

Թրքական բանտէն Երկուշաբթի ազատ արձակուեցաւ 52-ամեայ Մեհմետ Ալի Աքջան, որ 1981 թուականի Մայիս 13-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի հրապարակին վրայ հրազենէն կրակ բացած էր Հռոմի Յովհաննէս-Պօղոս Երկրորդ պապին վրայ: Կաթոլիկ եկեղեցւոյ հովուապետը ծանր վնասուածքներով տեղափոխուած էր հիւանդանոց, ուր վիրահատութեան ենթարկուած էր:



Աքջան անմիջապէս ձերբակալուած էր եւ Իտալիայի դատարանի վճռով դատապարտուած էր 19 տարուայ ազատազրկման: Այն ժամանակ 23 տարեկան Աքջան, ըստ իրաւապահներու, «Գորշ Գայլեր» թրքական ընդդատակեայ ահաբեկչական կազմակերպութեան անդամ էր:

1983 թուականին Յովհաննէս-Պօղոս Երկրորդը բանտին մէջ տեսակցած էր Աքջային եւ ըսած, որ ներում չնորհած է իրեն:

Իտալիայի բանտին մէջ պատիժը կրած Մեհմետ Ալի Աքջային տեղափոխած են Թուրքիա, ուր ան դատապարտուած էր 10-ը տարուան ազատազրկման մէկ այլ ծանր յանցագործութեան՝ թուրք լրագրողի մը սպանութեան համար:

Այսօր բանտէն ազատուած Աքջային, ով նաեւ ի պաշտօնէ դեռեւս կը համարուի զինապարտ, տեղափոխած են թրքական ռազմակայան, ուր պէտք է որոշուի անոր զինձառայութեան հարցը:

Թրքական բանտէն ազատուելու նախօրէին Մեհմետ Ալի Աքջան բրիտանական «Սանդէյ Թայմս» թերթին հասցէագրած նամակին մէջ գրած է. «Ես կը գտնուիմ հոգեպէս եւ ֆիզիքապէս միանգամայն կայտառ վիճակի մէջ, մտադիր եմ ազդարարել աշխարհի վերջը, գրել կատարեալ Աւետարան եւ քարոզել կատարեալ բրիտանիզմութիւն, որ վատիկանը երբէք չէ հասկցած»:

Յունուար 13ին ան «Ռոյթերզ» լրատուական գործակալութեան ուղարկած է ֆաքս, ուր յայտնած է, թէ կը ցանկայ հանդիպիլ Հռոմի Պենետիկտոս 16-րդ պապին եւ այցելել Յովհաննէս-Պօղոս Երկրորդի շիրմին: Ան խոստացած է նաեւ պատասխանել հանգուցեալ պապի վրայ մահափորձին եւ, մասնաւորապէս, անոր հետ պուլկարական ու սովետական գաղտնի ծառայութիւններու հարաւոր առնչութեանը վերաբերող հարցերուն:

Թուրք զինուորական պաշտօնեաներու ժամանակին հրապարակած գեկոյցի մը մէջ Մեհմետ Ալի Աքջան բնութագրած է որպէս «ծայրայեղ հակահասարակական մոլագարութեամբ տառապող անձնաւորութիւն»:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՎԵՐԼՈՒՆՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱ ՅՈՖՄԱՆ.

ՊԱՔԻՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՅԱՅԵՐԻ 3 ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՅԵՏԵՒՈՂԱԿԱՆՕՐԷՆ ԻՐԱԳՈՐԾՈՒԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՒԼԵՐ ԵՆ

Լրանում է Պաքուն հայերի ցեղասպանութան 20 տարին. այս կապակցությամբ հայ լրագրողների հարցերին պատասխանել է գերմանացի յայտնի իրաւապաշտպան, Պեռլինի Ազատ համալսարանի (Freie Universitat Berlin) գիտաշխատող Տեսա Յոֆմանը:

-Տիկին Յոֆման, յայտնի է, որ 1990թ-ի Յունուարի ցարդը Պաքուն հայերի էթնիկ գտումների վերջին ալիքն էր, գտումներ, որոնց սկիզբը դրուել էր դեռ 1905թ.-ին: Այդիսկ պատճառով Պաքուն յաճախ կոչում են երեք ցարդերի քաղաք: Ինչ էք կարծում, սա Յարաւային Կովկասի տարածաշրջանում հայերի նկատմամբ իրականացուող թրջական քաղաքականութան ժառանգորդութիւն է:

-1905-ի Փետրուարից մինչեւ 1906թ-ի Յուլիս ամիսն ընկած ժամանակահատուածի իրադարձութիւններն ընդունուած է անուանել «հայ-թաթարական պատերազմ»: Այն ժամանակ բազմազգ արդիւնաբերական քաղաք Պաքում, որտեղ բնակուած էին բազմաթիւ հայեր՝ բանուորներ, ձեռնարկատէրեր, հակահայկական անկարգութիւններ են սկսուած՝ տարածուելով դէպի Նախիջևանի եւ Ելիզավետպոլի (այսօր Գիանջա, հայերէն՝ Գանձակ), Թիֆլիսի ու Երեւանի ցարական նահանգները: Նշուած բոլոր նահանգներն այն ժամանակ դեռ կիսով չափ բնակեցուած էին «թաթարներով» եւ ամենուրեք հայերի տները հրոյ ճարակ էին դառնում, հայերը կոտորածների էին ենթարկուած ու հալածուած էին:

Այս գործողութիւնները մասամբ առաջնորդուած էին տեղական եւ տարածքային իշխանութիւնների սպորանքներով, խառնակութիւններով, ոճրագործներին հովանավորելով: Չնայած դրան՝ յարձակման ենթարկուած հայերին յաջողուած է սոցիալ-լեզուափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան կողմից կազմակերպուած քաղաքացիական ինքնապաշտպանութեան շնորհիւ մի քանի վայրերում յաջողութեամբ պաշտպանուել, մասնաւորապէս՝ Արցախի մայրաքաղաք Շուշիում, Թիֆլիսի նահանգում, ինչպէս նաեւ՝ Պաքում:

1918-1920թթ-ներին, Արեւելեան Անդրկովկասում երկու թրջական ներխուժումների ժամանակ (նախ երիտթուրքերի, այնուհետեւ՝ քեմալականների) բազմաթիւ անկարգութիւններ եւ բռնութիւններ են իրագործուած հայ խաղաղ բնակչութեան հանդէպ: Դր. Յո-

հանէս Լեփսուր՝ 1895-1918թթ.-ները հայկական հալածանքների փաստագրողը, իր «Գերմանիան եւ Հայաստանը» գրքի առաջաբանում (1919թ.) գրում է. «Չնայած գերմանական սպաների, դանիական եւ շուեդական հիւպատոսների եռանդուն առարկութիւններին՝ Նուրի փաշան՝ թրջական գլխաւոր հրամանատարը, թաթարներին թոյլատրում է տէր ու տնօրինութիւն անել: Մինչեւ իսկ Պաքուի օտարերկրացի բնակիչները պաշտպանուած էին աւազակային անկարգութիւններից»:

Սեպտեմբերի 14-ին սկսուեց



թրջական բանակի յարձակումը Պաքուի վրայ: Նախքան կանոնաւոր բանակի զօրամասերի մուտքը քաղաք՝ թրջական ռազմական ղեկավարութիւնը տեղական ապօրինի կազմաւորումներին՝ այսպէս կոչուած «բաշիբուզուներին» հնարաւորութիւն տուեց սպանել եւ թալանել հայերին: Պաքում բնակուող մի յոյն՝ Քրիստափոր Միխայլովիչ էվանգուլովը, որը պատասխանատու էր քաղաքի փոստային եւ հեռախօսային կապի համար, գրում էր.

«Ամբողջ քաղաքում հայ բնակչութիւնը կոտորածի է ենթարկուած եւ ոչ մուսուլմանական անձինք հիմնովին կողոպտուած են:

Նրանք կոտրել են դռներն ու պատուհանները, մտել բնակելի թաղամաս եւ տղամարդկանց, կանանց ու երեխաներին դուրս քարշտալով, փողոցում սպանել են:

Որոշ տեղերում դիերի լեռներ են կիտուել, իսկ շատերի մարմինները «դում-դում» արկերից սարսափելի վէրքերով են պատուած: Ամենանողկալի տեսարանը ի յայտ էր գալիս Սուրուքան փողոցի Գանձա նրբանցքի մուտքի մօտ. ամբողջ փողոցը ծածկուած էր երեխաների դիերով, որոնք ինը կամ տասը տարեկանից մեծ էին: Մօտ 80 դիակ պատուած էին թրերի եւ



կան ճակատի իշխանութեան ներքոյ: Այդ ժամանակ սանձարձակութիւնները հայ բնակչութեան նկատմամբ արդէն համակարգուած բնոյթ էին կրում եւ տարածուած էին հիւսիսային Արցախի գաւառներում: Յունուարի 10-ին Հայաստանի հանրապետութեան խորհրդարանը մի մտահոգ հարցում ուղղեց ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի նախագահ Միխայիլ Գորբաչովին. «Տառապում են անմեղ կանայք, երեխաներ եւ ծեր մարդիկ: Բանը համուած է ծեծով սպանելուն, հրկիզումներին, պատանդ վերցնելուն եւ փողոցների ու կամուրջների շրջափակմանը»:

Յունուարի 13-ից հալածանքները Պաքում կազմակերպուած ձեւ ընդունեցին: Քաղաքը հետեւողականօրէն՝ տուն առ տուն, «մաքուում» էր հայերից: Ընդ որում, ինչպէս երկու տարի առաջ Սումկայիթում, անչափահասների եւ ծեր կանանց բռնաբարութիւններ ու խոչտանգումներ էին կատարուած: Պաքու տանող ճանապարհները շրջափակուած էին: Ով կենդանի էր մնում, ուղարկուած էր նաւահանգիստ, որտեղից հայերը նաւով հեռացուած էին, հիմնականում դէպի Թուրքմենիա: Պաքուի փախստականներից հարիւրաւորներն իրենց տեղեկութիւններում հաստատում էին, որ ժողովրդական ճակատի կողմից կազմակերպուած եւ ղեկավարուող հետապնդումներն ընթանում էին ըստ մի անփոփոխ սխեմայի: 10-20 ոճրագործ ներխուժում էր մի բնակարան եւ սկսում կենտրոններին տեւորի ենթարկել, ծեծել ու տանջել: Այնուհետեւ, երեւում էին ժողովրդական ճակատի ներկայացուցիչները եւ ահաբեկուած հայերին առաջարկում անյապաղ գնալ նաւահան-

սվիները վէրքերով. «կնչայտ էր, որ նրանք մորթուել էին ինչպէս գառներ»:

Ժամանակակիցները եւ յետագայ ուսումնասիրողները սպանուածների թիւը գնահատում են 20-30 հազար: Ընդ որում, նկատի առնուած չեն նրանք, ովքեր թուրք զաւթիչների կողմից իրենց տները դուրս են շարտուել, դարձել անօթեան փախստականներ եւ չեստագայում մահացել սովից, ցրտից ու հիւանդութիւններից:

-Փաստօրէն դարավերջում դահիճների ձեռագիրը գրեթէ չի փոխուել...

-1990 թ.-ի Պաքուն փաստացիօրէն գտնուած էր ժողովրդա-

Շաք-ը էջ 20

| | | | |
|--|---|---|---|
|  <p>Blue Cross of California Authorized Agent</p> |  <p>Blue Shield of California Authorized Agent</p> | <p>SERVING SINCE 1975</p> <p>BEDROS S. MARONIAN</p> <p>(818) 500-9585 BMaronian@AOL.com</p> <p>FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205</p> <p>ԵՐԻԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ</p> |  |
|  <p>A.B.A. INSURANCE SERVICES</p> | | | |

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ

ԳԱՂԱՓԱՐԻ ՈՒ ՀԱՅԵՐՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ՄԵԾ ԱՌԱՔԵԱԼԸ

Ա.Ա.ՄՐՈՆ ԾԽՐՏՋՄԵԱՆ

Մահը այնքան ճշգրիտ ու ողորմելի է անոր առջև՝ հսկայի մը ոտքերուն պլլուող սողունի մը նման, որովհետեւ ան որ սողալու համար ծնած է, բնաւ պիտի չհասնի երկինքին: Իսկ ան որ թռչիլի գիտէ, բնաւ պիտի չճանչնայ մահը:

Այդպիսի հսկայ մըն է ընկեր Սարգիս Տխրունին՝ հնչակեան անվեհեր հրապարակագիրն ու ճարտասանը, հայ քաղաքական մտքի զարգացման նախակարապետը գաղթաշխարհի մէջ:

Ֆրանսացի գաղութարարներուն ցուցումով դադրեցաւ բաբարելէ բոցաշունչ մարտիկին սիրտը: Բայց անցնող տարիներուն հետ ամէն օր քիչ մ'աւելի մեծցաւ ու հասակ առաւ ան, աւելի կենդանի ու շէնչող դարձաւ անոր պայծառ դէմքը, աւելի խորաթափանց՝ անոր արծուային նայուածքը, միշտ անմահ ու ճառագայթող՝ անոր գաղափարները:

Տխրունին կը քոտ սկզբունքի տէր անձնաւորութիւն մըն էր՝ Նազարբէկեանի, Փարամագի ու Վանիկի աւանդոյթներուն հաւատարիմ շարունակողը: Ան խիզախ էր՝ ինչպէս Փարամագը, ժողովրդասէր՝ ինչպէս Վանիկը, եւ անգիշող սկզբունքի տէր՝ ինչպէս Նազարբէկեանը: Տխրունին, միաժամանակ, հնչակեան մամուլի լաւագոյն յատկութեանց անգուգական արտայայտիչն էր: Անոր լեզուն պարզ էր, բայց հատու, ախտաճանաչումները ճիշդ, քննադատութեանց մէջ անգութ Տխրունին կը խորագանէր հայրենիքին ու ժողովուրդին թշնամիները այնպիսի վճռականութեամբ բժշկիկը կը հարուածէ պալարը իր նշգրտակով:

Տխրունին խոր վերլուծող էր եւ նշանաւոր ճարտասան: Ան գիտէր իր դատողութեան ու տրամաբանութեան ուժին ենթարկել իր ունկնդիրները եւ իշխել անոնց զգացումներուն ու տրամաբանութեան վրայ: Ատանայի Ս.Գ. Հնչակեան կուսակցութեան Ուսանողական միութեան մէջ թրծուած՝ Սարգիս Տխրունին իր կուսակցութեան հետ դարձաւ հայրենիքի պայծառ իրականութեան առաջին պաշտպանը գաղթաշխարհի մէջ:

Ինքն էր, որ առաջին անգամ յայտարարեց.

«Մեր նուիրումը Խորհրդային Հայաստանին՝ ակնկալութեամբ չէ, այլ գաղափարական»: Անասման էր անոր նուիրումը մայր հայրենիքին հանդէպ: Բայց մեծ էր նաեւ անոր յարգանքը տարբեր ժողովուրդներու հայրենիքներուն նկատմամբ: Անոր հայրենասիրութիւնը հեռու էր ամէն թիւ ազգայնամոլութենէ: Գաղութարարութեան դէմ պայքարելով ազատութեան ու անկախութեան տենչացող ժողովուրդի մը կողքին՝ Տխրունին համար կը նշանակէ պայքարած ըլլալ իր սեփական հայրենիքի անկախութեան համար: Որովհետեւ այն ուժը, որ տարբեր ժողովուրդի մը անկախութեան թշնամին է, չի կրնար հայ ժողովուրդի անկախութեան բարեկամը ըլլալ:

Այս առողջ դատողութենէն մեկնելով՝ Տխրունին դարձաւ Լիբանանի ազատագրութեան համար պայքարող առաջին ռասիստներէն մին: Ան աննահանջօրէն պայքարեցաւ ֆրանսացի գաղութա-



րարներուն դէմ, դատապարտեց անոնց ստրկացումի եւ նուաճողական քաղաքականութիւնը եւ ոչ իսկ անգամ մը իր աչքը թարթեց ֆրանսական սուկներուն առջև: Տխրունին այսօր կը դասուի արաբական երկիրներու անկախութեան համար գոհաբերուած պայծառ անուններու կարգին: Տխրունին, որ իր անձով կը մարմնաւորէր Ս.Գ. Հնչակեան կուսակցութիւնը տակաւին 1925-ական թուականներուն դարձաւ հայրենասիրութեան, ժողովրդասիրութեան եւ աննահանջ պայքարի խորհրդանիշը: Տակաւին այդ թուականներուն՝ Հնչակեան կուսակցութիւնը դարձաւ գաղթաշխարհի հայրենասէր հայութեան հիմնաքարը, հզոր յենարանը, որուն վրայ պիտի բարձրանար անոր ազգային ճակատը:

Տխրունին հայրենասիրութեան անմար ջահ էր. գաղթաշխարհի մէջ հայ քաղաքական մտքի զարգացման նախակարապետը: Այդ պատճառաւ էր, որ ֆրանսական գաղութատիրութիւնը Տխրունին մէջ կը տեսնէր իր ամէնէն ոխերիմ թշնամին: Այդ պատճառաւ էր, որ ֆրանսական գաղութատիրութեան դաւադիր ձեռքը Յունուարի գիշեր մը սողոսկեցաւ եւ դադրեցուց հայրենասիրութեան առաքելին սրտին տրոփը: Տխրունին գիտէր, թէ ինչպիսի՛ ստորնութիւններու ատակ էր գաղութատիրութիւնը:

Ան գոչած էր. «Վատ է ան, որ ճշմարտախօսը լռեցնելու համար գնդակ կ'արձակէ»:

Լռեցին Տխրունին շրթները... Բայց Տխրունին սկսաւ խօսիլ հազարներու շրթներէն: Որովհետեւ կանգուն մնաց անոր մայրը՝ Հնչակեան կուսակցութիւնը: Եւ ով որ ծնունդ էր տուած Տխրունին, կրնար ծնունդ տալ նոր Տխրունիներու: Գաղութատիրութիւնը կրեց ամօթալի պարտութիւն: Քաղաքական ոճրագործութեամբ անոնք խորհեցան սպաննել հայրենասիրութիւնը եւ ցամքեցնել անոր աղբիւրը, որ Հնչակեան կուսակցութիւնն էր: Բայց Տխրունիի գաղափարախօսութեան սերմերը, որոնք ինկած էին բերրի դաշտերու մէջ, զարնանային արեւի առաջին ճառագայթներուն առջև ցցեցին իրենց ծիւրերը, հասակ առին ու ուռճացան եւ ողողեցին հնչակեան

ՍԱՐԳԻՍ ՏԽՐՈՒՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ «ՍՈՒՐԻԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ 13 ՄԱՅԻՍԻ 1925 ՄԵԿ ՀԱՅԱՍՏԱՆ, ՄԵԿ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Վերջին տասնեակ մը տարիներու ընթացքին եւ անկէ առաջ, Ռուսահայի եւ Թրքահայի, Արեւելահայի եւ Արեւմտահայի խտրականութենէն, Արեւելեան եւ Արեւմտեան երկու հակադիր օրինակներուն ներքոյ առաջնորդութենէն ծնունդ առնող վնասներն ու անպատեհութիւնները տեսնելէ յետոյ, այս ազգը ոչինչ ունէր ընելիք, բայց եթէ միայն վերջ տալ այս անջատողականութեան եւ քաղաքական երկուութեան՝ ընդունելով Մասիսէն անդին եւ ասդին, աշխարհի ամէն կողմը ապրող հայկական հատուածները՝ որպէս մասնիկները ազգային ամբողջութեան, եւ որդեգրելով ուղի մը, համապատասխան՝ մեր մայր երկրի աշխարհագրական դիրքին ու քաղաքատնտեսական պայմաններուն:

Դժբախտաբար, սակայն, պատմութեան դասերը բաւական չեղան այս ժողովուրդը զգաստացնելուն:

Այնքան դառն փորձերէ, այնքան աղէտներէ ու ողբերգութիւններէ յետոյ, կարծես թէ ոչինչ պատահած լինէր, տակաւին կը շարունակուի այն ճամբան, որ մեր դժբախտութեանց պատճառ հանդիսացաւ եւ որ խորխորատէ խորխորատ առաջնորդեց:

Այսօր, կարելի է անվախօրէն եւ առանց վերապահութեան յայտարարել թէ հայ ազգ գոյութիւն չունի, համանման իտէլի եւ ձգտում, հասարակաց մէկ հայրենիք ունեցող հաւաքականութիւն իմաստով, այլ կան հայանուն իմբաւորումներ՝ զանազան եւ զարմանազան ձգտումներով, տարբեր գաղափարականներով:

From a very more realistic, or cynical view, we are not the Palestinians; we don't have the demographics in Western Armenia and that makes our territorial claims that much weaker. And the separation mentally within the diaspora between what was Soviet Armenia, the Russian speaking Armenians, the eastern-Armenian speaking Armenians, and us, is not only a negative development but it's also leading the diaspora nowhere. In other words, the real key to healthier progress in the diaspora is to focus more on the statehood of Armenia, because we have two things -- the Armenian nation, which includes the diaspora, and the Armenian state. They are two very different things. And up till now, we see almost a contradiction between the Armenian nation and the Armenian state.

But the quality of the Armenian

state is so poor that here in Armenia we need the diaspora more than ever in terms of reversing the negative direction in which we are going -demographically, economically or politically. At the same time, the institutions that were built in the diaspora were built to sustain it until regaining independence. But now that independence has been regained, even though it's on a smaller portion of the historic homeland, what are we waiting for? What is the diaspora waiting for?

What I am saying is that not all from the diaspora have to move back; but some have to. In other words, the contradiction between every April 24th in the diaspora and the daily life of most diasporans compared to the absence of the diasporan presence here is so great that it begins to question the mission and the mandate of the diasporan organizations and institutions.

(To be continued)

ԳՐԱԿԱՆ

ՏԱԳՆԱՊՆԵՐԸ ՍՓԻՒՌՔԱՅԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԱԼՔԵՐՈՒՄ

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Սփիւռքահայ գրականութիւնը ձեւաւորման առաջին իսկ շրջանից հանդէս է եկել իբրև ցաւի արտայայտութիւն: Երկրագնդի զանազան միջօրէականներում տազանայները նրա մշտատեւ ուղեկիցն են եւ դարձել են դիմորոշ յատկանիշ՝ դրսեւորելով ամենատարբեր ուղիներն: **Արամ Սեփեթեանի՝ 2009 թ. Պէյրութում լոյս տեսած «Բանաստեղծութիւնը Տազանայի Ընդմէջէն»** գիրքը 75-ամեայ լիբանանահայ արձակագրի ու իմբազրի, այսօրուայ մեր յոբելարի գրեթէ չլիտար տարիների խոհերի ու դիտարկումների ընդհանրական հաւաքածոն է:

Չորս ամփոփ գլուխներից բաղկացած այս գրքում հեղինակը փորձում է բացայայտել այն մտահոգութիւնները, որոնք գեղարուեստական արձագանգ են գտել Սփիւռքի գրական կալուածում: Ընդ որում, տարբեր գրամշակութային միջավայրերում դրանք տարբեր հնչողութիւն են ստացել: Հեղինակը՝ իր իսկ բնորոշումով «ամբողջական պատկերի չլաւակնող» այս գրքում հայեացք է նետում Լիբանանի, Միջերկրականի եւ Վոսփորի ափերին արմատ նետած սփիւռքահայ սերունդների կեանքին:

Ակունքների ակունքը, ի հարկէ, վահան թէքէեանն է՝ իր թողած յետագծով, իր տազանայներով, իր հզօր ազդեցութեամբ: Պատահական չէ, որ թէքէեանապաշտ Ա. Սեփեթեանը այս գլխում առանձին գլուխ է նուիրել ուսուցչին՝ Գ. Վարուժանի եւ Ե. Չարենցի կողքին: Ա. Սեփեթեանի արդար տպաւորութեամբ՝ վահան թէքէեանն է շարունակում գլխաւորել սփիւռքահայ բանաստեղծութեան տազանայների երթը: Անտեսելու չէ, որ հենց ինքն է հրատարակել բանաստեղծի մահուան 50 ամեակի առթիւ «Յիսուն քերթուած» գոլտրիկ գրքոյկը:

Վ. թէքէեանը առաջինն է խիտմ գրականութեան տազանայի կոչնակները Սփիւռքի մէջ: Եւ իրօք. մայրիների երկրում 1958 թ.ից մինչեւ 90-ականները ընդհատ-ընդհատ բորբոքող քաղաքացիական կռիւները դիտելով իբրև համազգային տազնայ՝ Ա. Սեփեթեանը փորձել է ուրուագծել

արդէն Մուշեղ Իշխանի, Չարեհ Մելքոնեանի, Երուանդ Պարսումեանի, Լեւոն Վարդանի, Պէպօ Սիմոնեանի, Գառնիկ Աղդարեանի, Գրիգոր Պըլտեանի, Սարգիս Կիրակոսեանի եւ այլոց ստեղծագործութիւնների մէջ այդ տազնայի բովանդակութիւնը՝ ազգայինի հետ համադրումի ճանապարհով: Դա նորարարական մօտեցման վկայութիւն է, որը լրումի է բերում ցաւի համարմարդկային ընկալումը հայի մօտ եւ գալիս է Վ. թէքէեանից:

Նկատենք, որ այդ պատերազմի սարսափները պատճառ դարձան նախկին կենսունակ գաղութից հայ հոծ զանգուածների տեղաշարժերին, իսկ հետեւանքները հաւասարակաւ իրենց վրայ կրեցին նաեւ այդ երկրում ապաստան գտած հայերը, որոնց համար հիւրընկալ, «հայրենամերձ» այս երկիրը երկրորդ Հայաստան էր: Ծաւալուող քաղաքական խմորումները առատ նիւթ տուեցին լիբանանահայ գրականութեանը՝ հապէս փոխելով նրա ազգային նախկին դիմագծերը, դարձնելով այն յարաճուն պայքարի մէջ թրծուող գրական ամբիտն, որն ի վերջոյ ուղղուելու էր ազգային ճանաչողութեան նոր սահմանին:

Շատերի համար բանաստեղծական գործըքը համընկաւ «օտարի» ցաւի սուր գզացողութեանը, որը լաւագոյնս ամբողջացրել է Պէպօ Սիմոնեանը.

Իմ Աւագ Ուրբաթս, պահս երկունքի սկսաւ ցաւով Մայրիի Ծառին... հառաջանքներով իր սաղարթներում ահուհ ճիւղերով իր արմատներում...

Բանաստեղծի նն է ցաւը, հայինն է մորմօքը, եւ հայ քերթողը «կը հասունայ» ցաւի ոչ աւանդական ազգային արմատով: Այստեղ նորարարական մօտեցում կայ, որը գիտական ճանաչողութեան յայտարարի է բերում Արամ Սեփեթեանը: Իր բնոյթով ու քաղաքական եղանակներով ուրիշ էր տազնայը Վոսփորի ափերին: Եթէ Լիբանանի պարագային քրիստոնեաց եւ մահմեդական հարեւան ժողովուրդները պայքարում էին երկիրի ամբողջակամութեանը սպառնացող ներքին ուժերի դէմ, ապա թուրքիայի հայ համայնքի մէջ տեսանելի էր պայքարը ազգային գեղարուեստական

մտածողութեան խորացման ուղղութեամբ, պայքար սփիւռքեան դաշտում գրական առաջնութիւն նուաճելու համար, որոնք էլ առանձնացրին գրական աւանդութիւնը օջախը Սփիւռքի միջօրէականներում: Եւ դա այդպէս էր, քանի որ գրական խաղի ու պատկերի առարկայական խտութեան լիցքը հասցէական իմաստներ էր առնում միջավայրի հանդէպ պարտադիր գոշաւորութեամբ պայմանաւորուած: Բանաստեղծութեան մէջ այդ նոյն «գոշաւորութեան» բանալիները ապահովում էին բնութեան իրերն ու առարկաները, որոնց խորքում խորհրդանշանների համակարգն էր (Չահրատ, Չարեհ իւրախունի): Ա. Սեփեթեանը սթափ քննութեան է ենթարկում Չահրատի 2006-ին լոյս տեսած երկհատոր ամբողջական ժողովածուն, վերահասում Զ. իւրախունու բանաստեղծական հարուստ վաստակը՝ յօդուածների նպատակային շարքով, ծանրանալով «Մերոպատոն» եւ «Տօնագանգ» գրքերի վրայ, որոնցից վերջինը յոբելեանական էր՝ երեւանեան հրատարակութիւն: Առարկաների խորհրդանշանների պայմանական ընկալումների ներքոյ, ինչպէս Ա. Սեփեթեանն է արձանագրում, «ընթացողի մօտ այն տպաւորութիւնը տեղ գտած է, թէ իսթանպուլահայ բանաստեղծութիւնը դժուարըմբռնելի խորհուրդներ կը պարզէ»: Նորագոյն պոլսահայ քերթողութեան՝ որոշ իմաստով արմատ բռնած թիւր ըմբռնումները յաղթահարելու, սիմվոլիկ բանաստեղծութեան բուն էութեան տարրերին հասնելու համար նա խորհուրդ է տալիս դիմել գիտական վերլուծումների յայտնի օրինակներին՝ ի Հայաստան եւ ի Ֆրանսիա:

Լիբանանահայ մտաւորականի համար գեղարուեստական տազնայները ունեն ազգային հաւաք մտավախութիւնների ընկալչութեան դրոշմ՝ դուրս այլեւս գուտ բանաստեղծութեան սահմաններից, ստացած աւելի լայն՝ համասփիւքեան նշանակութեան իմաստներ: Արտաքին ազդակների թելադրութեամբ շարունակուող տարաբնոյթ տագնայները շարժառիթ են «հին» օջախներում երկրորդութեամբ տեղաշարժերի, ինչի խոր ցաւը ինքը՝ Արամ Սեփեթեանն ապրել ու վերապրում է նաեւ այսօր, նաեւ իր լիբանանահայ բանաստեղծ գրչընկերների բնագրերում: Խոր իմաստ կայ Վահէ-Վահեանի «Մատեան սիրոյ եւ մորմօքի» ժողովածուի հետեւալ տողերի վկայակոչութեան

փաստի մէջ. Կ'երթան աճիսինդ, աճար-ցո՛ւնք... Ու կը տանին իրենց հետ ընծիւղներ ճոր դեռ ծլած եւ ընծիւղներն ալ վաղուան, Որ կրնային խորարմատ դառնալ ծառեր ծաղկաւետ Ու պարտէզին հայրենի տալ պտուղներ հոտեւան:

Ընդգծենք, որ Վահէ-Վահեանի հանդէպ հեղինակի ուշադրութիւնը աւելի ինամուած բնոյթ է կրում. դա հաստատելու է գալիս բոլորովին վերջերս նրա Չանքերով «Սիփան» հրատարակչութիւնում գլուխ եկած «Հրածեշտի քերթուածներ» անտիպների հրաշալի ժողովածուն, որի յառաջաբանում գիրքը կազմող գրագէտը նշում է, որ այն «կը հանդիսանայ հայ ստեղծագործ միտքի իմացական էջերու գեղեցիկ համադրութիւն մը...», եւ կը փակուի շարքը սփիւռքահայ մեծ քերթողին տաղարաններուն»:

Այս գրքով Ա. Սեփեթեանը հնչեցնում է հայաշունչ Սփիւռքի մարման ահագանգը՝ իր խոհերին ու անդարդարձումներին մասնակից դարձնելով «դուրսի աշխարհի» լայն տարածքի վրայ ապրող, յաճախ գեղարուեստական տարբեր առաջադրութիւններ, բայց խորքի մէջ ընդհանրական մտահոգութիւններ ունեցող բանաստեղծների:

Յաւով արձանագրենք, որ Սփիւռքի շարունակականութեանը ապաւնացող վտանգները թէ՛ խորհրդային տարիներին, թէ՛ անկախութեան շրջանում «դուրսեցիների» հանդէպ անշահագրգիռ վերաբերմունքի արդիւնքում հայրենի միջավայրին այնքան էլ հասու չեղան: Բաւական է նշել, որ Ա. Սեփեթեանի այս գրքում մեկնութիւն գտած տասնեակ բանաստեղծներից միայն մի քանիսի ստեղծագործութիւններն են հայրենիքում լոյս տեսել, այն էլ՝ ոչ ամբողջութեամբ, մասնակի, հպանցիկ եւ յապաղումով, պատեհապաշտութեան, նպատակայարմարութեան սկզբունքով, ճնշող մեծամասնութեամբ՝ առանց հեղինակների գործածած Մերոպեան ուղղադրութեան պահպանման:

Իսկ ընդհանուր առմամբ, ճշմարիտ է այն միտքը, թէ գրականութիւնն առանց տազնայի, առանց ներքին յոյզերի, մաքառումի անկարելի է, ինչպէս Մ. Մեծարենցը պատկերի տակ կը քաշէր՝ «ծաղիկն» առանց «հովի»:

Մտում է, որ սփիւռքահայ գրա-

Շաք.ը էջ 18

Թէքէեան Մշակութային Միութեան
Լոս Անճելոսի մասնաճիւղ
ԳԻՆԵՉՕՆ
ՅԱԿՈՐ
ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆԻ
«ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ - 4»
Հայտորի հրատարակութեան առիթով
Ելոյթ կ'ունենան՝
ՄԱՐԶՊԵՏ ՄԱՐԿՈՍԵԱՆ
ՎԱՉԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ
Հանդիսավար
ՄԱՐԱԼ ՈՍԿԵԱՆ
Ուրբաթ, 29 Յունուար, 2010
Երեկոյեան ժամը 8:00-ին
ՎԼԵՆՏԵՅԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԿԱՐԱՆ
222 E. Harvard Avenue, Glendale
Validated Parking at Marketplace Parking Structure
(Harvard & Maryland)
ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ - ՄՈՒՏԵՐ ԸՉՈՍ

ՅԱՆՆՈՐԸ ԲԱՐՁՈՒՆՔՈՒՄ

ԱՄԱՆՈՐԸ ԲԱՐՁՈՒՆՔՈՒՄ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Յետ Ամանորեան 2010-ի առաջին օրերից մէկն էր, գարնանային եղանակի տպաւորութիւն թողնող Գլենդէլեան օր, արեւաշող երկինք: Բրանդ պողոտայից դէպի կոթողային Ամերիքանա (Americana) համալիրն եմ քայլում: Այս հսկայ տարածութեամբ համալիրի վայրում նախապէս ընկած էր ֆուտպոլի դաշտաչափ բացատ եզրին հին շէնքեր, որոնց շարքում էր նաեւ իրանահայ միութեան շէնքը: Նրանք հողին հաւասարուեցին, հին կառուցներ, ոչ սազեկան գործին եւ Գլենդէլի կենտրոնական պողոտային: Մեծածախ քանուրդների անխոնջ աշխատանքով գետնից վեր յանուց մեծ գործարքի համալիրը, որի ակնատեսն եղաւ քանդուած մինչեւ լրիւ կառուցումը: Նրա բացումը կատարուեց 2008-ին պետական եւ ժողովրդական բացօթեայ շէնք հանդիսութիւններով:

Տօնական օրեր եւ գեղեցիկ զարդարանքներ, վիթխարի կոնաձեւ տօնածառը անթիւ ու անհամար երկինքանդ շարիկներով իւրաքանչիւր անցորդի ուշադրութիւնն է գրաւում կանգնեցուած աւազանին կից գրաւիչ վաճառատներով ու ճաշարաններով շրջապատուած հրապարակում, ուր ընդարձակ աւազանի տարածքում շատրուանները պիւուր եղանակի նուազակցութեամբ հերթականօրէն պար են գալիս մերթ առանձին, մերթ խմբական դէպի երկինք ժայթքող ու փլուզող ջրերով անցորդներին իրենց շուրջը գրաւելով: Այսպէս աչքի խփող կառուցներ ամէն մի քայլիս առաջ մտնում եմ, ինձ դարձնել կանգնեցնում է ցուցադրական երկաթուղին յաճախորդներով, որն իր սիրունասարք նստարաններով, դանդաղ ընթացքով եւ իր յատուկ կոչնակով շուրջ պտոյտ է գործում ուրախութիւն պարգեւելով նստողներին՝ առաւելաբար երեխաներին, որոնք հպարտ կարծես իրենց զգում են ձիաբարձ իշխանական ֆուրգոնի մէջ:

Այսպէս հետաքրքրասէր ցանկութեամբ շրջապալութեան էի ելած համալիրում, այնտեղ, ամէն մի վայրում տիրապետում էր տօնական ոգեւորութիւն, վիստում էր խաչտաբղէտ անցորդների եւ յաճախորդների շարքերը, առաւել աչքի էր ընկնում երիտասարդ նազելի աղջիկներ իրենց գրգռիչ երեւոյթներով: Գնումի ելած չէի: Ծարուակեւորով քայլերս հասել էի երեխաների խաղավայրին, ուր նրանց ճաշարանները, կանչերն ու խաղերը, անկախ մտածուածից, ինձ կանգ էին տուել խորանայով նրանց անհոգ թուփոցին ու ճճւոցին յիշելով իմ մանկութեան անհրապոյր տարիները, ոչ խաղավայր կար, ոչ խաղի միջոց, չոր ու ցամաք փողոց, ձմեռները տիրով ողորդած, ամաններն էլ փոշեթաթիւս: Այդ մտքերում ընկղմուած մօտակայ երեխայի յանկարծակի լացի ձայնից սթափուեցի եւ առաջ շարժուեցի, մինչեւ իսկ բուրովին մտքովս չանցնող իմ առաջն բռնանց թեհրանի իմ վաղեմի ընկերներից Հրանդը, գարնացած ու կարկամած իրար փաթաթուեցինք:

Այ տղայ՛, հատեղ ի՞նչ ես անում, Հայաստանը որտեղ, հատեղ որտեղ, էս ինչ հրաշք է քեզ հանդիպելով, շուրջ քառասուն տարուայ անցեալ, երիտասարդի մի կեանք, հէ՛յ տարիներ, հովի պէս անցնող տարիներ, ե՛րբ եւ ինչպէ՛ս ան-

ցաք, էս ինչ ճակատագրի անմեկնելի խաղ Հրանդ ջան, ով էր կարծում, որ էս աշխարհի պոչում իրար հանդիպենք:

Երկար գրգախառնուած կարօտակէզ համբոյրներ դրոշմուեցին փոխադարձ:

-Հա՛, իսկպէս, էս էլ նոյնիսկ մտքովս էլ եր անցնում, որ Ամերիկայում կը հանդիպենք, ինչ արած ապրուստի պայմանները մեզ այս կողմերը բերեցին:

-Սիրելի Հրանդ շատ ուրախ եմ երկար տարիներից յետոյ քեզ հանդիպելուս համար: Լաւ է, հատեղ ենք կանգնել, կէսօրուայ ժամ է, գնանք մի տեղ ճաշելու, այնտեղ կը շարունակենք մեր խօսակցութիւնը:

Այ ձեռքովս իրեն օղակած ճամբայ ընկանք դէպի ճաշարաններից մէկը, տեղ գրաւեցինք սպասելով մեր պատէէրի կատարուելուն:

Հրանդի հետ իմ ընկերութիւնը սկսուել էր մեր երիտասարդութեան վաղ տարիքում թեհրանի Նարմաթ թաղամասում: Չամուսնացած տղաներ էինք՝ մտերիմներ, կեանքի դառն ու քաղցրին մասնակից, նա հասակով կարճ՝ «Կոտոլ Հրանդ» էինք կոչում, նա ժառանգել էր իր հօր ֆիզիքական կերպարը եւ հօր ձայնը: Մեր ընկերական խնձոքներում իր ձայնով մեզ հիացնում եւ ընկերական ու աշխատանքի շրջանակում վատահելի մէկին էր, նա միջնակարգ դպրոցի շրջանաւարտ բանքի պաշտօնեայ էր՝ ինտերնացիոնալիզմ գաղափարներով տարուած սովետական կարգերի ջատագով: Նա քննադատում էր իր որոշ գարտուղի գաղափարների համար, սակայն անյողողող իր համոզումներն էր պաշտպանում: Նա սիրահարուել էր մի աղջկայ վրայ, որը ընտանիքով Հայաստան էին հայրենադարձել, ինքն էլ ջանանում էր հասնել իր սիրածին: Ամէն օր իր ծնողական չարկի տակ վէճ ու գրոյց էր գնում, ծնողները եւ եղբայրները հակառակում էին նրա գաղափարներին հետ, այդ աղջկայ ամուսնութեան հետ, բայց նա անսասան իրն էր պնդում: Այդուհանդերձ մեր ընկերական կապը պահում էինք նրա հետ, նկատելով նրա մաքուր եւ ջինջ ընկերական զգացումները, մարդկային մօտեցումները հարցերի նկատմամբ: Երբեմն հարց էինք տալիս իրեն ասելով.

-Ախր Հրանդ ջան ինչո՞ւ ծնողներիդ թողած մենակ ես գնում:

-Նրանք հակառակ դիրքումն են ի մասնաւորի եղբայրներս, նրանք կապիտալիստական հոգեբանութեամբ դաստիարակուած մարդիկ են, բան չեն հասկանում, թէ ինչո՞ւ եմ գնում, էս գնում եմ իմ հայրենիք՝ սովետական երկիրը, ուր ժողովուրդները հաւասարապէս եւ խաղաղութեամբ ապրում են, ազատութիւն կայ, ոչ մի խտրականութիւն, ամենի համար ուսում եւ կրթութիւնը ձեռի է, աշխատանք ու կեանք կայ, յառաջադիմութիւն կայ, ամենից կարեւորը իմ սիրած եարս է այնտեղ, նա ինձ շարունակ կանչում է թէ արթուն եւ թէ քնի մէջ:

Այս խօսքերով իբր թէ մեզ համոզում էր, բայց իզուր...

Նրա հայրենիք մեկնելու հետ հակառակ չէինք, դեռ քաջալերում էինք, նկատելով գոյութեան եւ յարատեւութեան խարխիւր Հայաստանն է, նրա կամակոր կեցուածքի հետ համաձայն չէինք մի որոշ անիրատես հաւատալիքների նկատմամբ: Իրանահայերս աշխատել ենք հաւատարիմ մնալ մեր ազգային

արժէքներին, ապացոյց՝ մեր չորս հարիւր տարիների կեանքը: Հայաստանի անկախութիւնից ի վեր իրանահայ գործարարներ մեծապէս օգտակար են գտնոււմ հայրենիքի սնտեսական գործընթացին:

Ընկերներով ներկայ էինք գտնուել Հրանդի ողջերթի խնձոցին, կային նաեւ հարազատներ եւ բարեկամներ, դեռ օրս էլ անմոռանալիօրէն յիշում եմ նրա ծերացած մօրը, թէ ինչպէս արցունքը աչքերում կուչ էր եկել աթոռին: Չորս եղբայրներ, երկուսն էին ամուսնացած եւ գաւակի տէր, Հրանդը կրտսերի մեծն էր: Յուզումնախառն ուրախութիւն էր նկատոււմ, տնցիներից ոչ մէկը համաձայն չէր նրա մեկնումի հետ, սակայն ամէն ինչ վերջ էր գտել եւ յաջորդ օրուայ կէսօրին նա գնացքով թողնելու էր իրանը, արդե՞օք մէկ էլ կը հանդիպէինք իրար, քանի որ նա գնում էր փակ դռների ետեւը: Բարի ճանապարհի մաղթանքներ կատարուեցին, յորդորներ եւ խրատներ տրուեցին, երգեր ու արտասանութիւններ, գեղարուեստական երեկոյթի տպաւորութիւն թողնող խնձոց, ոչինչը չէր փարատում Հրանդի ծնողների անհանգստութիւնը, նրանք տխուր էին եւ մտահոգ, էլի՜ ծնողի սիրտ էր, գաւակը իրենցից հեռանում էր պրոլետարական մի աշխարհ տարբեր դրուածքով, դեռ լաւապէս յիշում եմ մօր սրտածմբի խօսքերը ուղղուած Հրանդին արցնկալած աչքերով՝ -Բայէս, էս ինչ ես անում, դու մեզ մտաթափ կանես քո գնալովդ, ի՞նչ անենք, ասենք՝ չասենք գնալու ես, թող Աստուած քո սրտի մուրազը կատարի, էթաս, հասնես քո եարին, երջանիկ կեանք ունենաս, թող իմ մայրական օշնանքը քո ճամբի օգնականը լինի, Աստուած ձեռքը վրէժ լինի, ինչ անենք, որ ինձ կարօտ սրտով ու աչքով պիտի թողնես, տեսնում ես, ծերացել եմ, էսօր կամ, վաղը չկամ, քու տեղը միշտ կ'երեւայ, ինչ արած բայէս, Աստուած քեզ հետ:

Հրանդը գնաց, յաճախ ծնողներից բարեններ էր հասնում մեզ:

Մայրը Հրանդի կարօտը սրտում երկարատեւ հիւանդութիւնից մահացաւ, յուղարկաւորութեան ներկայ գտնուեցինք: Կարճ ժամանակից յետոյ մեր կապը խզուեց Հրանդի հետ եւ ամէն ինչ անցեալի յուշակծիկին փաթաթուեց:

Աւագանին հանդիպակաց ճաշարանում դէմ դիմաց նստած սպասում ենք մեր պատէէր կերակուրին:

-Ասա՛, տեսնեմ Հրանդ, ե՛րբ ես եկել Ամերիկա, ընտանիքիդ հետ ե՞ս, թէ՛ մենա՞կ:

-Երկար ժամանակ է, ընտանիքով ենք եկել, երբ քաւակներով:

-Չեմ ուզում խորանայ գալուդ պատճառների վրայ, բայց աներկբայ ասեմ, որ դէմ եմ հայրենիքից արտագաղթողների հետ, արդէն քեզ արդարացնելու համար գիտեմ ինչ պիտի ասես՝ գոյապրուստի դժուարութիւններ, խորթութիւն,

անգործութիւն, անօրէնութիւն եւ այլն, հիմա հատեղի մասին ինչ կասես:

-Ամերիկան ազատ եւ օրէնքով երկիր է՝ ծովածաւալ եւ հարուստ: Օրէնքով համահաւասար ապրում ենք, մենք արդէն ծերութեան տարիքումն ենք, երեխաները պիտի սովորեն առաջ գնալ, թող աշխատեն եւ օգտուեն յառաջադիմութեան պայմաններից ու օգտակար լինեն իրենց շրջապատին: Բայց մի բան կայ, որ նոր եմ հասկացել, քանի որ քո երկրումն ես, տանն ես, գեղեցկութիւնները չես նկատում, դուրս գալուց յետոյ ես զգում, հարազատ տունը այլ է, այն հողի եւ բնութեան կանչն ու համը տարբեր քաղցրութիւն եւ գրաւչութիւն ունի:

-Հայրենիք լքելը էլք չի փրկութեան, օտար հողը չունի այն ապահովութիւնը ինչ որ պայքանական բնօրրանը: Հայաստանի երեք նախագահների սխալ եւ անհեռատես քաղաքականութիւնը ժողովրդի արտագաղթի պատճառ է դարձել: Փոխանակ նրանք ներգաղթը քաջալերէին, այնպէս արեցին, որ ժողովուրդը գոյապրուստի համար արտագաղթի:

Ճաշարանի սեղան-աթոռները լեցուն էին, դրսում շարք էր գոյացել: մատուցողը պատէէր ուտեստեղէնը խմիչքներով շարեց մեր սեղանին:

Մեր խօսակցութիւնը դադարեց, անցանք ուտելու աշխատանքին: Շատ քիչ եմ ճաշարանում ճաշում կամ ընթրում, գոհունակութեամբ բաւարարում եմ կնոջս պատրաստած սեղանով, միթէ մի յատուկ պարագայ լինի, ինչպէս այս օրուանը:

-Լա՛ւ, սիրելի Հրանդ խմում եմ քո եւ ընտանիքիդ կենացը, շնորհաւորում եմ Ամանորը, իդէրի եւ ցանկութիւնների իրականացում եմ մաղթում, ամենաթանկագինը թող մտքով, հոգով եւ մարմնապէս առողջ ապրես:

-Քոնն էլ նմանապէս, շատ դժուար գտանելի է հսպիսի առիթները, անմեկնելի ուրախութեան պահ եղաւ ինձ համար, յիշել անցեալը եւ թարմացնել յուշերը, հակառակ էիք իմ մեկնելուս հետ, վիճում էինք, բայց չէի համոզոււմ, մարդ մինչեւ վատահելի աղբիւրից եւ ականջներով չլսի, աչքերով չտեսնի, պիտի չհաւատայ, նեղութիւններ շատ ունեցայ, բայց փառք Աստուծոյ հասայ իմ Սաթոյիս: Տուն տեղ ստեղծեցինք, գաւակներ ունեցանք, ապրում էինք անվրդով, սովետական կարգերի փլուզումը յեղաշրջեց մեր կեանքը, բարդութիւններին եւ նեղութիւններին պատճառով թողեցինք մեր երկիրը, հոսանքի հետ ընկած եկանք իբր «աւետեաց երկիր», յուսով մեր սխալը կը սրբագրեն մեր գաւակները:

-Անցնենք անցեալի յուշերը

Շաք.ը էջ 17

833 W. Glencrofts Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծածախականութիւնը եւ մանուկներու թաղանթաբեկ բուժում: Գրեթէ 24 ժամ, մէքի, բազային եւ միկանային ցտեք: Ինքնաշարժի վթարի ետեւանքով պատտանած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՊԱՏՄՈՒԾՔ

ՏԻՂՐԱՆ ԱՐՔԱՅԻ ՄՈՒՏՔԸ ԱՆՏԻՈՔ

(ՀԱՏՈՒԾ, «ՏԻՂՐԱՆ ԱՐՔԱՅԻ ՄՈՒՏՔԸ ՄՈՍԱՆԵՐԻ ԼԵՐԱՆ ՇԵՆ» ԱՆՏԻՊ ԷՍՏԵՅԻՑ)

Անտիոքի թագաւորի պալատի շուկատի մարտիկներն էին զգաստ շարքի կանգնած եղել քաղաքի պարիսպների արեւելեան դարպասի մուտքի երկու կողմերին: Դարպասին դափնիի ճիւղերով կամար էր կապուած եղել, որպէս արեւելքի արքայի Անտիոք յաղթական մուտքի փառքի նշան: Կամարի կանաչից ժպտում էին դափնիի ճերմակ փոքրիկ ծաղիկները: Սպիտակ ձիուն բազմած Տիգրան Արքան, նրան հետեւող զորավար Բագարատը, նրանց ուղեկցող շուկատները դարպասի առաջ էին: Դարպասն էր ճոխնշով լայն բացուել: Ջոկատի մարտիկներն էին բարձր կանչերով ողջունել Տիգրան Արքային Սելեւկիայի Անտիոքոս թագաւորի անձնական պատուիրակը դարպասի առաջ էր եկել, խոնարհել մտոզգին բազմած Արմինայի թագաւորի, արեւելքի Արքաների Արքայ Տիգրանի առաջ, ապա բարեւի կանգնելով բացականչել:

- Ողջոյն, Արմինայի Արքաների Արքայ Մեծ Տիգրանին: Անտիոքի թագաւորի յանձնարարութեամբ ողջունում եմ ձեր մուտքը Սելեւկիայի թագաւորանիստ ոստան Անտիոք: Աստղագուշակները քաղաքի, Աթենասի մեհեանի մեծ քուրմը աւետել են, որ նախորդ գիշեր, երկար իրանով բոցավառ աստղ է անցել Անտիոքի երկնակամարով: Նրանք այն մեկնաբանել են որպէս նոր գահակալի իշխանութիւն այս քաղաքում, իսկ պայծառ լույսը խաղաղութիւն ու բարգաւաճում նրան: Նայէք շքեղ քաղաքին այս, նրա արքունիքը ու ժողովուրդը յօծարակամ ընդունում են ձեր տիրապետութիւնը: Նայէք, կանաչով ու ծաղկունքով գոլգոլած թագաւորական պալատ գնացող արմէնների պողոտան: Արեւի գոյները քաղած դրօշներն են նրան ճամբեգրերի լինափններին: Նրանց աշտանակներին արքայի մուտքը ողջունելու լոյսեր են վառում, Միհրն արեգակն է երկնակամարից ողջունում ձեզ: Տիգրան Արքայ, դէպի թագաւորական պալատ տանող պողոտան բաց է ձեր առաջ: Բարի գալուստ, բարի երթ Արմինայի թագաւորին, արեւելքի արքաների արքային:

Տիգրան Արքան էր հայտնի շահարհի նրբերան, սպիտակ նժուղի թամբին բազմած: Միրանի պարեգօան էր ծալք, ծալք իջնում իրանից ցածր, հայկազունեան արքայական արեւային թագն էր գլխին, սեւ մագերի փուռներն էին բունքերից թափուած: Խոշոր, ծովագոյն, պայծառ ու արծուային խոյանքով ակներն էին փայլում որպէս արեգակունք, որոնք մարտում յաղթանակ կոփելու հուր էին ժայթքում: Արեւներ էին փայլատակում նայուածքից, պատրաստ զօրքն ու ալուածին կուռի առաջնորդելու:

Անտիոքի կանաչագարդ դարպասից պողոտայ էր մտնում արքայի նժուղը: Դարպասն էր վառուած հագար ու մի ծաղկունքի ծիածանով: Նրան յարող մայիթերին հագար, հագար Անտիոքիներ ծաղկեփունջեր էին նետում նժուղին յաղթ բազմած արքային: Փողեր էին հնչում, թմբուկներ էին զարկում, ժողովուրդն էր կանչում՝ Տիգրան Արքայ, Տիգրան Արքայ: Եւ պողոտայի խորքից, ծաղիկների փուռներ վեր պահած խուռներամ մարդիկ, մրգերով լի կողովներ բռնած վագում էին դէպի արքայի նժուղը: Բոլորը մի-

ասին խոնարհուել էին արքային, ապա ծաղկեփունջերը նետել նրա ու զօրավար Բագարատի վրայ, կողովներին մրգեր վերեւ նետել, որոնք վայր ընկնելով կարծէք արեւի ծիածաններ էին իջնում Տիգրան Արքայի արեւահուր հայկազունեան թագին: Տիգրան Արքան ու զօրավար Բագարատը զարմանքով նայել էին նրանց, նայուածքներն իրենց վերեւ յարած հրճուագին դիտել իրենց վրայ իջնող ծաղիկների ու գետին թափուող պտուղների հրաշափառ ծիածանը: Դիմաւորողների խմբից մի մարդ էր առաջ եկել, խոնարհուել ու այնուհետեւ այդպէս դիմել Տիգրան Արքային:

- Փառք Արմինայի Արքայից Արքայ Տիգրանին, ողջ լեռուք: Արմինայից Անտիոք եկած Արմէնհայերը ողջունում են իրենց թագաւորին, արեւելքի Արքաների Արքայ Տիգրանին: Անտիոքի կառուցմանը մասնակից լինելու Սելեւկեան իշխանի հրաւերով, երկու հարիւրից աւելի տարիներ առաջ հայտնի աշխարհի Մոփք գաւառից էին այստեղ ժամանած եղել մեր նախնի մեծ հայրերը: Այս ծառագարդ պողոտայի վրայ յառնած սիւնագարդ, կամարակապ տները մեր պապերն ու հայրերն են կառուցած եղել: Անտիոքիցինքը, «Արմէնների Պողոտայ» են կոչում այն: Անտիոքի ամենայն շքեղ փողոցն է: Իրիկունները, լուսագարդ այս պողոտան գծոււթան է քաղաքի բնակիչների ու պարման, պարմանուհիների սիրոյ խանդաղատանքի ժամադրաւայրը:

- Ահա, այս հարիւր հարիւր պարմանները եկել են իրենց աշխարհի թագաւորին ողջունելու, հայտնի թագին իրենց հաւատարմութիւնը հաւաստելու, արեւելքը, աշխարհը նուաճած նրա բանակին գինուտարգրութեամբ: Ահա, իրենց մանչերը գրկեցին այս հարսերը եկել են աղաչելու իրենց թագաւորին, հայտնի աստուածների Անտիոքի մեհեանում, վահագնի քաղութեան, Միհրի արեւի ծիածանի, Անահիտի մայրութեան հրաչք լոյսերը վառէիք նրանց ճակատներին: Արմէն հայերի աստուածների ոգու կրակի բոցերը չեն մարել մեր սրտերում, հայտնի «Հայերէն» մեր հայտնի աշխարհն է, այն չի խամբել:

- Մտներն են մեր պայթում հայտնի աշխարհի արքայի փառքով, արեւն իջած նրա թագին լոյսով, նրա զօրքի այս քաղաքին տիրելուն, այս քաղաքը նաեւ նրա աթոռանիստ ոստանը լինելուն: Արեւելքը նուաճած Արքաների Արքայ նրա աթոռանիստ ոստանը լինելուն: Արեւելքը նուաճած Արքաների Արքայ Տիգրան, հայտնի քաղաքի գէնքով ու աշխարհակալ երկիրը հասաւ այս ծովեր, ու դեռ ծովերից անդին գնացող երկրներ:

- Ահա, Արմէն հայերն այս քաղաքի, ձեր արքայական շքախումբի երկու կողմերին խմբուած, կուռ շարքերով քայլում են դէպի պալատ: Ձեռքերնին երկարած վերեւ, կարծես ուզում են իրենց փեղերի վրայ պալատի հրապարակ տանեն ձեզ: Նայէք, մտիկ առէք, երգերն այս, թմբուկի զարկերն այս հայտնի աշխարհից են բերել: Նախնիների աստուածների մեհեանների առաջ իրենց Նահապետի Նաւասարդեան սուսախումբութիւններ յուշերն են այդ: Թող քաղաքն այդ թնդայ հայու խինդով, արմէնների երգերով գնանք պալատ: Փառք հայտնի արքային,

փառք նրա գէնքին, փառք հայտնի քաղաքի գօրքին:

Անտիոքի պարիսպների աշտարակների ջահերն էին վառուած, Անտիոքն էր վառուած երգով, թմբուկի բազմութեամբ, մարդկանց կանչերով: Պողոտան էր խնդում կանաչով, նրա վրայ փառում մանուշակների աշուկներն էին ժպտում հիմքայի դեղին ծաղիկները որպէս աստղիկներ, երկունի լոյսն էին բերել պողոտայ: Արքայի նժուղը նագանքով քայլում էր կանաչ պողոտայով: Տիգրան Արքան էր ձեռքով ողջունում իրեն դիմաւորող քաղաքի բնակիչներին, իր արեւահուր թագին իջած արեւի ճառագայթներն էին իջնում նրանց վրայ, փեղերով հաւաքում էին այն, որպէս քաղութեան հուր ցօղում իրենց դէմքերը:

Տիգրան Արքայի արքունական զօրագունդի հետ քայլում էին հայտնի աշխարհի հարաւային կողմից եկած լեռնական հայերը: Հիացել էին քաղաքի Արմէն-հայերի պողոտայի շքեղութեամբ, արքային ցուցաբերած նրանց դիմաւորման հանդիսաւորութեամբ: Երբ սկսել էին հարցողակցիլ նրանց հետ, չափազանց ուրախացել էին, որ հարիւրաւոր տարիներ անց էլ պահպանած էին եղել իրենց «Հայերէն»ը: Բաւականին դժուար էր եղել սահուն հարցողակցելու իրարու հետ: Նրանք հայտնի աշխարհի տարբեր շրջաններից էին ժամանած եղել, տիրապետել բարբառային ու հնչիւնային խօսակցական շայերէն լեզուի ուրիշ տարբերակների: Ամուր գրկախառնուել էին, նայել էին իրարու աչքերին, նոյն լոյսի հուրն էր կաթում այնտեղից:

Տիգրան արքան, զօրավար Բագարատը հասել էին պալատի մուտքին յարող հրապարակ: Արքունական շուկատն էր կուռ շարքերով օղակած եղել այն: Բաղաչի հոծ բնակչութիւնն էր հրապարակի բոլորտիքը խմբուած: Անտիոքի Սելեւկեան թագաւորը, արքունի աւագանուն հետ պալատի լայն բացուած դռնից հրապարակ էին իջել, դիմաւորելու Արմինայի արքային: Իրենց նժուղների բազմած Տիգրան Արքան եւ զօրավար Բագարատը հրապարակ էին մտել, հայեացքներն էին յարել պալատի աստիճաններից իջնող թագաւորին ու նրան հետեւող աւագանուն: Անտիոքոս թագաւորն էր խմբից առաջ եկել, գլուխ խոնարհել, նրան հետեւել էին աւագանու անդամները: Անտիոքոսն էր այդպէս դիմել Արմինայի արքային:

- Ողջ լեռուք արեւելքի Արքաների Արքայ, Արմինայի Տիգրան թագաւոր: Սելեւկիայի Անտիոքոս թագաւորը ողջունում է ձեր մուտքը Անտիոք: Արքունի աւագանին, Անտիոքի ամբողջ բնակչութիւնը բարի մաղթանքներ են յղում ձեր ողջութեանը: Տեսէք, ինչ խանդաղատանքով է ամբողջ Անտիոքը ձեր գալուստը դիմաւորում: Հարիւրաւոր տարիների ընթացքում կառուցել ենք այս շքեղ քաղաքը, արեւելքի Աթէնքը, արեւելքի Հուլիան է այն: Այնտեղ բարձր զարգացման են հասել արհեստներ, մշակոյթ, գիտութիւններ:

- Անտիոքի այդ բարձր պարիսպների շրջապատի հողում յառնել են ձեր ազգակից արմէնների այգիները, ցորեանի դաշտերը, որտեղ ամբանը, աշնանը արեւն է իջնում վառուելու, ցորեանի արտերում ոսկէ հուր փռելու: Արմէններն են իրենց արարման հեքով քաղաքի այս պողոտան արարել, իրենց աստուածների մեհեանների նման սիւնագարդ, կամարակապ տներ: Իրենց նախնի թագաւորների արարած

ջրանբոցների նման, այստեղ էլ ջրուղիներ են փորել, Անտիոքի լճի ջրերը հոսեցրել քաղաք ու նրանց գրկած դաշտի հանդեր ու այգիներ: Սելեւկիայի «Պոլիս»ների ինքնիշխանական նկրտումներ, արքունի աւագանու խարդաւանքները տկարացրել են Սելեւկիա հզոր պետութեան պաշտպանական կարողականութիւնը: Նրա տարածքի նկատմամբ Եգիպտոսի Պողոտէոնների սպառնալիքները, այնուհետեւ Հուլիանի ծաւալապաշտական քաղաքականութիւնը Սելեւկիա պետութիւնը կարող էին տանել կործանման:

- Փառահեղ կառուցներով, անբաւ հարստութեամբ աթոռանիստ այդ շքեղ ոստանին սպանում է պարակտուելու, փլուելու, կողոպտուելու արտաքին վտանգը: Այդ եւ լայնածաւալ Ասորիքում Սելեւկիայի թագաւորութիւնից մնացած տիրոջները պաշտպանական ապահովութիւնը, հարկադրել էին արքունիքին (պոլիս)ների աւագանու հետ համատեղ կայացնելու խելամիտ որոշում: Սելեւկիայի մայր ոստան Անտիոքը, ընդունում է Արմինայի թագաւորի, արեւելքի աշխարհակալ տէրութեան Արքաների Արքայ Տիգրանի ռազմական ու քաղաքական հովանաւորութիւնը:

- Ահա պալատը, ի նշան խաղաղութեան բացուել են նրա բոլոր դռները, վառում են բոլոր ջահերը, քաղաքն այս հռչակում եմ ձեր նոր աթոռանիստ ոստան, պալատն այս թագաւորանիստ կառույց: Ձեր ժամանման ու Անտիոքի Սելեւկեան թագաւորական թագը ձեզ յանձնելու համար, քաղաքային ամփիթատոնում նախաձեռնել ենք կատարելու հանդիսաւոր տօնախմբութիւն: Վաղը միջօրէին, Անտիոքի ամփիթատոնում եկած աշխարհային ժողովուրդը, արքունիքը կ'ողջունեն ձեր մուտքը Անտիոք: Թոչլ տուէք ձեզ առաջնորդել պալատ:

Պալատի հրապարակի շուրջը ու նրա յարակից փողոցներում խմբուած Անտիոքիցիները բացականչել էին՝ «Ողջոյն մեր նոր թագաւորին»: Հապա, փողերի ու թմբուկների որոտները: Սեւ յատակով մօտիկ գետի ջրերին էին եկել ջրածին հարսեր, այդ նուազների հնչիւնների ելեւէջների վրայ ջրի շիթեր երկինք փռելով արեւային պար եկել: Այդ խրախճանքների բոցերի լոյսը երեւի հասել էր մինչեւ իրենց Աթէնք, մինչեւ հայտնի հայքեր: Մանչերին գրկած մայրերն էին այդ լոյսը ցօղում նրանց աշուկներին:

Տիգրան Արքայի շուկատների զօրականների շարքերը ետ էին քաշուել, լայն բացուել էր հրապարակը: Թմբուկահարները ու փողահարները առաջնորդութեամբ դէպի հրապարակ էին գալիս պարմանների ու պարմանուհիների մի մեծ խումբ: Հրապարակը շրջապատած անտիոքիցիները միջմանք էին բացել: Իրենց լեռների այծեամենների մորթներից պատուած թմբուկներն էին զարկում, փոքրիկ ու մեծ փայտերով համաչափ զարկում: Կարծէք, այն իրենց աշխարհի լեռների գազաթներից ժայթքած կրակի պայթիւնների որոտները լինէին, իրենց Անդեղաց Տորքի թշնամու վրայ գլորած ժայռերի հոնդիւնը լինէին: Նրանց ընկերակցում էին փողահարները, որոնք ծիրանների ծառի փայտից փորած, վահագնի եղեգան լեզուականեր ազուցուած փողերով, իրենց աստուածների քաղաք Աշտիշատի սուսեաց անտուները սուսափիւնը, իրենց աշխարհի հաւքերի դայալներն էին հնչեցնում: Նրանց հետ

ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՌԱՅԿԻՐԱՆԵՐԸ

ԴԱԻԻԹ ԲԷԿ

(?-1728)

Դալիթ Բէկ (ծննդեան թ. անյայտ-1728), հայ գորավար, իրանական խաների եւ թուրքական նուաճողների դէմ Սիւնիքի զիւղացիական ազատագրական շարժման առաջնորդ: Արեւելեան Հայաստանի բնակչութիւնը XVIII դ. սկզբներին իրանական խաների բռնութեան ներքոյ ենթարկուած էր սոցիալական ու ազգային ճնշման, որից ելք էր որոնում ապստամբական շարժման մէջ: 1720-ական թթ. հայ ազատագրական շարժումները նոր վերելք ապրեցին, մտան զինուած պայքարի շրջանը: Գործողութեան մէջ դրուեց Ռուսաստանի օգնութեամբ Հայաստանն ազատագրելու: Իսրայէլ Օրու ծրագիրը: Շարժման առաւել աչքի ընկնող կենտրոններն էին Ղարաբաղն ու Սիւնիքը:



ըին: Այնուհետեւ Դալիթ Բէկի գործը յաջող մարտեր մղեց Օրդուբազին, Նախիջևանի եւ Բարգուշատի խաների, Ղափանի ֆէտուալների դէմ, գրաւեց Սիւնիքի բոլոր կարեւոր կէտերն ու բնակավայրերը: Ղարաբաղի գորայիների օգնութեամբ ետ մղեց Ղարաբաղի խանի յարձակումը: Սիւնիքում նա ստեղծեց հայկական իշխանութիւն, որի կենտրոնն էր Հալիձորի բերդը: Դալիթ Բէկը կազմակերպել է մշտական բանակ, որ սիւսուած է եղել տարբեր շրջաններում, իսկ վտանգի դէպքում միաւորուել է: Չնայած այս յաջողութիւններին, Դալիթ Բէկի գործերը Նախիջևանի եւ Եղուարդի ճակատամարտերում պարտութիւն են կրել:

1725ի գարնանը թրքական զորքերը գրաւել են Անդրկովկասը եւ Դաղստանի ֆէտուալների հետ միանալով աքցանի մէջ վերցրել Ղարաբաղն ու Սիւնիքը:

Թրքական բանակի առաջապահ գնդերը, բախուելով Դալիթ Բէկի գործի հետ, պարտուել են ետ են քաշուել: Թրքական հրամատարութիւնը իր կողմն է գրաւել հայ առեւտրա-վաճառական խաւին, մահմեդական հողատէրերին, թափանցել Մեղրի՝ դժուար դրութիւն ստեղծելով Դալիթ Բէկի համար: Նրա շուրջ համախմբուած մելիքների ու տանուտէրերի մեծ մասը լքեց նրան եւ հպատակուեց թուրքերին: Դալիթ Բէկը նահանջեց եւ ամրացաւ Հալիձորում, որը պաշարեց թշնամին: Դալիթ Բէկը կարողացաւ իր փոքրաթիւ զորքով անսպասելի յարձակումով ջախջախել եւ փախուստի մատնել հակառակորդին: 1727ին Դալիթ Բէկը կապ հաստատեց Ատրպատականում գտնուող Պարսից շահ Թահմասպի հետ, որ ճանաչեց նրա իշխանութիւնը Սիւնիքում, սուեց դրամ հատելու իրաւունք: 1728ի գարնանը թրքական զորքերը արշաւեցին Սիւնիք եւ Ղարաբաղ: Ներքին ու արտաքին անսպաստ պայմաններում Դալիթ Բէկի փոքրաթիւ զինուած ուժերը չէին կարող յարատեւ ու անհաւասար կռիւներ մղել զօրեղ հակառակորդի դէմ: Այդ ժամանակ վախճանուած Դալիթ Բէկին փոխարինեց Մխիթար սպարապետը:

ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ

(1658-1711)

Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ: Հայաստանի ազատագրութեան խնդրով 1677-ին էջմիածնի գաղտնի ժողովում ընտրուած պատուիրակների եւ հօր՝ Մելիք Իսրայէլի հետ 1679-ի դեկտեմբերին մեկնել է Կ.Պոլիս: Պատուիրակութեան՝ Եւրոպա մեկնելու ճանողումից յետոյ պատուիրակ արքեպիսկոպոսներից մէկի յանձնարարութեամբ, հայ վաճառականների հետ 1680-ի վերջին անցել է Վենետիկ, 1683-ին՝ Փարիզ, որտեղ սկզբում զբաղուել է ֆրանսիական բանակի պարենմատակարարմամբ, ապա՝ մտել զինուորական ծառայութեան՝ հեծելազորի լեյտենանտի, յետոյ՝ հեծելազորի կապիտանի աստիճանով եւ 1688-95-ին մասնակցել անգլո-ֆրանսական պատերազմին: 1698-ին կուրֆյուրստ Յովհան Վիլհելմին ներշնչել է Հայաստանը նուաճելու, նրա թագաւորը դառնալու եւ Օսմանեան կայսրութեան թիկունքում անկախ Հայաստան ու Վրաստան կազմաւորելու միտքը: Յովհան Վիլհելմը համաձայնել է եւ Իսրայէլ Օրու միջոցով թղթեր յղել Քարթլիի Գիորգիի XII թագաւորին, հայ մելիքներին, Ամենայն Հայոց եւ Արլանից կաթողիկոսներին եւ մանրամասն տեղեկութիւններ ինդրել Հայաստանի ու յարակից երկրների տնտեսական, քաղաքական ու ռազմական պայմանների մասին: 1698-ի Օգոստոսին Իսրայէլ Օրին ժամանել է Վիեննա՝ աւստրիական Լեոպոլդ I կայսրից եւս յուսադրող գրութիւն ստանալու, սակայն մերժուել է Թուրքիայի հետ սկսած խաղաղութեան բանակցութիւնների պատճառով: Այնուհետեւ մեկնել է Ֆլորենցիա, ստացել Տոսկանայի դուքս Կոզմա III-ի համաձայնութիւնը եւ 1699-ին ուղեւորել Հայաստան: Սակայն Հայաստանում եւ Վրաստանում իրադրութիւնը լրիւ փոխուել էր: Նախկինում ապստամբ Գիորգի XI-ը հնազանդուել եւ գտնուում էր Սպահանում, իսկ Հայոց կաթողիկոս Նահապետ Ա Եղեւացին ու Գանձասարի Սիմէոն կաթողիկոսը չեն արձագանքել Իսրայէլի Օրու ձեռնարկմանը՝ Միայն Մելիք Սաֆրազի օժանդակութեամբ Իսրայէլի Օրուն յաջողուել է Անգեղակոթ աւանում Ապրիլին գումարել Սիւնիքի 11 մելիքների խորհրդաժողով, որտեղ կազմուել են գրութիւններ՝ ուղղուած Յովհան Վիլհելմին, Հռոմի պապին, աւստրիական կայսրին, Տոսկանայի դքսին եւ ուսուցչար Պետրոս Մեծին: Հայաստանի ազատագրութեան գործին սատարելու խնդրանքով: Անգեղակոթի ժողովը Իսրայէլի Օրուն է տրամադրել նաեւ մաքուր, կնքուած թղթեր՝ ըստ անհրաժեշտութեան դիմումներ կատարելու: Իսրայէլ Օրու հետ Եւրոպա է ուղարկուել Մինաս վարդապետ Տիգրանեանցը՝ որպէս մելիքների ներկայացուցիչ եւ Իսրայէլի Օրու օգնական՝ 1699-ի Մեպտեմբերին մեկնելով Դիւսելդորֆ՝ Իսրայէլի Օրին եւ Միսաք վարդապետը մշակել ու 1700-ի սկզբին Յովհան Վիլհելմին են ներկայացրել Հայաստանի ազատագրութեան ծրագիրը, ըստ որի, կազմուելու էր եռեակ դաշինք՝ Դաշնակիցների բանակը անցնելու էր Ռուսաստանով՝ վերջինիս համաձայնութեամբ, հետեւաբար, ծրագրի իրագործմանը պէտք է մասնակցեր նաեւ Ռուսաստանը: Արտաքին օգնութիւնը դիտուել է



որպէս ազգակ՝ երկրում ապստամբական շարժում հրահրելու. Հայաստանի ազատագրութիւնը պէտք է իրագործուեր հիմնականում սեփական ուժերով: Ծրագրում առաջնահերթ տեղը տրուել է պարսկական լծի տակ գտնուող Արեւելեան Հայաստանի ազատագրութիւնը՝ յատուկ ընդգծելով հայ ու վրաց ժողովրդների համատեղ պայքարի անհրաժեշտութեան գաղափարը: Ծրագիրն իրականացնելու համար Յովհան Վիլհելմը Իսրայէլի Օրուն յանձնարարականներով ուղարկել է Տոսկանայի դքսի եւ աւստրիական կայսրը մօտ, սակայն վերջինս հրաժարուել է Հայաստանի ազատագրման գործին մասնակցելուց: Սպանական ժառանգութեան համար սկսած պատերազմի պատճառով: Աւստրիայի հրաժարումը խափանել է եռեակ դաշինքի ստեղծումը եւ, Արեւմուտքից յոյսը կորած, Իսրայէլի Օրին 1701-ին մեկնել է Մոսկուա՝ Ռուսական պետական գործիչների հետ վարած բանակցութիւնները Իսրայէլի Օրուն հանգեցրել են այն մտքին, որ քրիստոնեայ Ռուսաստանը, որպէս Մերձաւոր Արեւելքում լուրջ քաղաքական ու տնտեսական շահագրգռութիւններ ունեցող երկիր, ի վիճակի եւ տրամադիր է սատարելու Հայաստանի ազատագրութեան գործին: Ուստի, Իսրայէլի Օրին մշակել է նոր ծրագիր, որում Հայաստանի ազատագրական գործում գլխաւոր դերը յատկացուում էր Ռուսաստանին: Այն պէտք է տրամադրեր 25-հազարանոց բանակ, որը Դալիթի կիրճով ու կասպից ծովով մտնելու էր Հայաստան, որտեղ նրան էին միանալու հայ ու վրաց ապստամբները եւ համատեղ ուժերով, օգտուելով Պարսկաստանի ընդհանուր թուլութիւնից, կարճ ժամանակում ազատագրելու էին Արեւելեան Հայաստանը:

Ըստ Իսրայէլի Օրու, Ռուսական օգնութիւնը պէտք է գուզակցուեր հայերի ապստամբական լայն շարժման հետ, որպէս ազատագրութեան եւ հայրենի պետականութեան վերականգնման կայուն երաշխիք: Գիտակցելով, որ Արեւելեան Հայաստանն ազատագրելու անյաջող փորձը կարող է վտանգաւոր կացութիւն ստեղծել հայ ժողովրդի համար՝ Իսրայէլի Օրին ձգտել է ապահովել Ռուսաստանի եւ Հռոմէական սրբազան կայսրութեան հակաթրքական կողմնակցիւն, փորձել հայ ժողովրդի ազատագրական պայքարը դուրս

ՎՐԻՊԱԿ

«ՄԱՍԻՍ»-ի մեր նախորդ, Յունուար 16, 2010 թուականի համարի մէջ լոյս ընծայած Էրնէ խիստ շահեկան յօդուած մը «Բարգէն Ա. Արոտակից Կաթողիկոս Կիլիկիոյ եւ իր «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ» Աշխատասիրութիւնը» վերնագրով, որուն հեղինակը, մեր բոլորին սիրելի աշխատակից՝ Տէր Զաւէն Ա. Քեմլյ. Արգուսմանեանն էր, որուն անունը վրիպումով մը մոռցուած էր տպագրուել: Կ'ապաւինեմք իր ներողամտութեան:

ՊԱՔԻՈՒՄ ԶԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՒԼԵՐ ԵՆ

Շարունակում է 6-էն

գիտտ: Նրանց թույլատրում էր իրենց հետ ձեռքի ծանրոց վերցնել, սակայն նրանցից իսլուում էին ամբողջ կանխիկ դրամը, ինչպիսիք գրքոյկները եւ արժէքաւոր իրերը: Նաւահանգստում տեղակայուած էր ժողովրդական ճակատի մի պահակակէտ: Փախստականներն այստեղ դարձեալ խուզարկուած էին, երբեմն նորից ենթարկուած ծեծի:

-Ղուք ունէ՞ք տուեալներ Պաքուում 1990 թուականի հայերի քարոզի զոհերի թուի վերաբերեալ:

-Պաքուում հետապնդումների ժամանակ սպանուածների թիւն այդպէս էլ ստույգ չայտնի չէր, քանի որ այս կապակցութեամբ դատական որեւէ ուսումնասիրութիւն չի իրականացուել: Կան առանձակի վայրագութեամբ իրագործուած սպանութիւնների բազմաթիւ վկայութիւններ (օրինակ, գոհերը կենդանի հրկիզուած էին): Այն ատրպէյճանցիները կամ այլ ազգութիւնների ներկայացուցիչները, որոնք փորձուած էին օգնել հայերին, վտանգուած էին իրենց կեանքը:

1997թ-ին Պաքուի դէպքերն արտացոլուած էին ՄԱԿ-ի «Կանանց դէմ խտրականութեան վերացման հարցերով զբաղուող յանձնաժողովի» 17-րդ համագումարում հայկական պատուիրակութեան կողմից ներկայացուած գեկոյցում (1997թ. Յունիսի 17-25), որում ասուած էր. «1990 թ.-ի Յունուարին Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուում հայ համայնքի ներկայացուցիչները հինգ օր շարունակ սպանուած, թալանուած եւ ստորացման էին են-

թարկուած: Յղի կանայք եւ երեխաները ենթարկուած էին անասելի խոշտանգումների: Աղջիկներին բռնաբարուած էին ծնողների աչքի առաջ, նրանց մէջքին խաչ էին խարանուած: Նման վերաբերմունքի պատճառը նրանց քրիստոնէական հաւատն էր»:

Կազմակերպուած զանգուածային բռնութիւնները չսահմանափակուեցին Պաքուով, այլ տարածուեցին նաեւ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի, ինչպէս եւ հիւսիսից սահմանակից երկու շրջանների՝ Խանլարի ու Շահումեանի հայերի վրայ: Յունուարի 16-ին Ատրպէյճանի ղեկավարութիւնը վճռեց հետեւեակային գործասերի, ինչպէս նաեւ ուղղաթիւների միջոցով կանոնաւոր կերպով հրետակոծել Շահումեանի եւ Խանլարի հայկական գիւղերը: Շահումեանի շրջանի Մանաշիղ գիւղակը առանձնակի վայրագութեամբ կարտէզներով հիմնովին գնդակոծուեց:

-Ըստ ձեզ՝ ի՞նչ իրաւական եւ քաղաքական գնահատական պէտք է տրուի 1990թ-ի Յունուարի 13-19-ը Պաքուում կատարուած իրադարձութիւններին:

-Համաձայն ցեղասպանութեան վերաբերեալ ՄԱԿ-ի կոնվենցիայի (1948թ.) հեղինակ Ռաֆայէլ Լեմբինի կողմից ցեղասպանութիւն բառին տրուած ձեւակերպմանը՝ ցեղասպանութիւնը որեւէ էթնիկ կամ կրօնական խմբի հետեւողական եւ նպատակաւորութեամբ ոչնչացումն է: Պարտադիր չէ, որ այս ոչնչացումն արտայայտուի բացառապէս զանգուածային սպանութիւններով, այն կարող է ուղեկցուել համակցուած գործողութիւններով: Ես չեմ կարող աւելի լա-

ներկայացնել նրա միտքը, քան Լեմբինի «Ցեղասպանութիւն» նշանաւոր գրքի 9-րդ գլխի մեջբերումը. «Axis-ի (նացիստական Գերմանիայի, ֆաշիստական Իտալիայի եւ միլիտարիստական Ճապոնիայի միջեւ 2-րդ Համաշխարհային պատերազմի ժամանակ) օրէնքը օկուպացուած եւրոպայում. Օկուպացիայի օրէնքները («Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation «Analysis of Government» Proposals for Redress) (Washington D.C., 1944, p. 79-95):

«Ընդհանրապէս ցեղասպանութիւնը պարտադիր չէ, որ նշանակի ազգի ուղղակի բնաջնջում, բացառութեամբ, երբ այն աւարտուում է ազգի բոլոր անդամների զանգուածային սպանութիւններով: Նախ հարկ է առանձնացնել տարբեր գործողութիւնների համակարգուած ծրագիրը, որ նպատակ ունի ոչնչացնելու ազգային խմբերի կրեւոր հիմքերը եւ հենց իրենց՝ խմբերին: Նման ծրագրերի ինդիքը քաղաքական, տնտեսական եւ սոցիալական կառոյցների, մշակութի, լեզուի, ազգային ինքնագիտակցութեան, կրօնի ոչնչացումն է. այն ամէնի՝ ինչ կարելու կենսական նշանակութիւն ունի տուեալ ազգի համար: Ցեղասպանութիւնը ուղղուած է ազգային խմբի որպէս մի ամբողջական միաւորի դէմ, եւ ներառուած գործողութիւններն ուղղուած են անհատների դէմ ոչ անձնապէս, այլ որպէս տուեալ ազգային խմբի ներկայացուցիչների»:

Եթէ բառի այս բացատրութիւնը վերագրենք Ատրպէյճանում ապրող հայերին կը նկատենք, որ 20-րդ դարի ընթաց-

քում ատրպէյճանական շովինիստական կուսակցութիւնները 3 անգամ համախմբուած ցեղասպանութեան փորձ են կատարել ատրպէյճանական պետութիւնում բնակուող հայ էթնիկ խմբի նկատմամբ, յատկապէս՝ մայրաքաղաք Պաքուում եւ ԼՂ-ում, ուր ապրում էին մեծ քանակութեամբ հայեր: Այս փորձերը համընկան ճգնաժամային իրավիճակի հետ, երբ պետութեան նախորդ կենտրոնական ուժը թուլացաւ կամ նուազեց, ինչպէս որ կատարուել էր 1904/5, 1918 - 1990ին: Եթէ նայենք ժողովրդագրական եւ մշակութային արդիւնքներին, կը տեսնենք, որ այդ փորձերը չիրաւի «յաջողուած են». դա հենց թրքական ազգային քաղաքականութիւնն էր՝ ոչնչացնել հայ ազգը Օսմանեան կայսրութեան տարածքում: Եւ, մինչդեռ, Թուրքիայում Հայ Առաքելական եկեղեցու գոյութիւնը պետականօրէն ընդունուած է (Լոզանի պայմանագրի շնորհիւ 1923 թ.), Ատրպէյճանում նման բան գոյութիւն չունէր:

Ներկայիս հայ-ատրպէյճանական պատմութեան իրողութիւնը շատ հեռու է թուում Ատրպէյճանի կողմից լայն տարածում գտած, պետական մոտեցումներից: Այդ պետութեան եւ ԶԼՄ-ների կողմից հայ-ատրպէյճանական յարաբերութիւնների վերաբերեալ հետեւեալ ընկալումն է ստեղծուել, թէ իբր հայերը դաժան յանցագործներ են եւ զաւթիչներ, իսկ ատրպէյճանցիները անմեղ գոհեր են: Ահա այս ամէնի ճշմարիտ արտացոլումն է, որ պէտք է ձեւաւորել անհրաժեշտ նախապայման՝ իրական հաշտութեան հասնելու համար:

Homenmen is Hosting its Annual Big Bear Winter Getaway
 January 29-31, 2010

For Reservations call Krikor: (818) 429-1703

Visit Homenmen.org

FOR MORE INFORMATION AND PAYMENT OPTIONS

Hosted By Location

\$120 General
 \$100 Homenmen Athletes
 \$100 for children under 12
 Includes: Room, Board, Meals